ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Երևանի Մ. Հերացու անվան

պետական բժշկական համալսարանի

ռեկտոր_____ Մ.Զ. Նարիմանյան

«29» մարտի 2013թ.

# ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ «ԲՈՒԺԱԿԱՆ ԳՈՐԾ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ «ԲԺԻՇԿ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՄԲ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

**Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան**

**Կորյունի փ. 2, 0025, Երևան, Հայաստան**

**Երևան 2013**

Ինքնավերլուծությունն իրականացրած աշխատանքային խմբի կազմը

| Անուն, Ազգանուն | Պաշտոն |
|---|---|
| Սամվել Ավետիսյան | Հանձնաժողովի նախագահ, ԵՊԲՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, պրոֆեսոր |
| Լարիսա Ավետիսյան | ԵՊԲՀ կրթության որակի գնահատման և ապահովման կենտրոնի ղեկավար, պրոֆեսոր |
| Գրիգելդա Նավասարդյան | ԵՊԲՀ ախտաֆիզիոլոգիայի ամբիոնի պրոֆեսոր |
| Մարինա Բալասանյան | ԵՊԲՀ ֆարմակոլոգիայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր |
| Կոնստանտին Ենկոյան | ԵՊԲՀ կենսաքիմիայի ամբիոնի պրոֆեսոր |
| Բագրատ Ենոքյան | ԵՊԲՀ դեղագիտության ֆակուլտետի դեկան, դոցենտ |
| Արամ Բայկով | ԵՊԲՀ ուսումնամեթոդական վարչության կրթական ծրագրերի բաժնի պետ, դոցենտ |
| Մելիք Սողոմոնյան | ԵՊԲՀ իրավաբանական բաժնի պետ |
| Արամ Հայրապետյան | ԵՊԲՀ կրթության որակի գնահատման և ապահովման կենտրոնի ղեկավարի տեղակալ |
| Դավիթ Ղազարյան | ԵՊԲՀ պրակտիկայի բաժնի պետ |

# Բովանդակություն

**Չափանիշ 1**
Մասնագիտության կրթական ծրագիրը ..... 4

**Չափանիշ 2**
Դասախոսական կազմը .....18

**Չափանիշ 3**
Դասավանդումը և ուսումնառությունը .....26

**Չափանիշ 4**
Ուսանողների գնահատումը .....33

**Չափանիշ 5**
Հետազոտական և ստեղծագործական գործունեությունը .....43

**Չափանիշ 6**
Կրթական միջավայրը .....50

**Չափանիշ 7**
Ենթակառուցվածքը և ռեսուրսները .....56

# Չ Ա Փ Ա Ն Ի Շ 1

## Մասնագիտության կրթական ծրագիրը

**Մասնագիտության կրթական ծրագիրը (այսուհետ՝ ՄԿԾ) համապատասխանում է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակի, որակավորման բնութագրի և պետական կրթական չափորոշչի պահանջներին, ինչպես նաև ՄՈՒՀ-ի առաքելությանը:**

**Հավակնությունները:** *Համալսարանը ձգտում է կրթական ծրագրի իրականացման համար անհրաժեշտ պայմանների բարելավման միջոցով հասնել առաքելության բարձրացմանը և նպաստել աշխատաշուկայի պահանջները բավարարող որակյալ մասնագետների պատրաստմանը:*

**Չափորոշիչ ա. ՄԿԾ-ի նպատակները և խնդիրները համահունչ են հաստատության առաքելությանը և նպատակներին:**

«Բուժական գործ» կրթական ծրագրի հիմնական նպատակը «Բուժական գործ» մասնագիտությամբ և ‹‹Բժիշկ›› որակավորմամբ (մագիստրոսի աստիճանով) մասնագետի պատրաստումն է, որը կարող է իրականացնել մասնագիտական հետևյալ գործառույթները.

1. բուժկանխարգելիչ
2. ախտորոշիչ
3. վերականգնողական
4. գիտահետազոտական
5. կրթական/կրթադաստիարակչական/
6. կազմակերպչական, կառավարման

(տե՛ս «Բուժական գործ» մասնագիտությամբ «Բժիշկ» որակավորմամբ կրթական ծրագրի նկարագիրը):

Այսպիսով՝ ծրագրի նպատակը համահունչ է Համալսարանի առաքելությանը՝ «…կազմակերպել բժշկական բարձրագույն կրթություն, պատրաստել առողջա-

պահության համակարգի բարձր որակավորում ունեցող մասնագետներ (տե՛ս ԵՊԲՀ 2006-2010 թթ. ռազմավարական ծրագիրը, էջ 6):

Ծրագիրն ապահովում է Համալսարանի ռազմավարական ծրագրում ընդգրկված նպատակների իրականացումը, այդ թվում «ուսուցման որակի և կրթական ծրագրերի արդյունավետության բարձրացումը» (տե՛ս ԵՊԲՀ 2006-2010 թթ. ռազմավարական ծրագիրը, նպատակ 2, էջ 12): Այդ նպատակի իրականացման համար կրթական ծրագիրն ապահովում է ուսումնառության վերջնարդյունքների վրա հիմնված դասավանդման մեթոդների, բակալավրիատի և մագիստրատուրայի շրջանավարտների ամփոփիչ որակավորման առավել արդյունավետ համակարգի կիրառումը (տե՛ս «Բուժական գործ» մասնագիտությամբ «Բժիշկ» որակավորմամբ կրթական ծրագրի նկարագիրը, առարկայական ուսումնական ծրագրերը):

«Բուժական գործ» կրթական ծրագիրը հնարավորություն է տալիս լուծելու Համալսարանի ռազմավարական ծրագրում ընդգրկված ևս մեկ կարևոր խնդիր՝ «միասնականացնել ընդհանուր կրթության ծրագրային նյութը բակալավրիատի կրթական ծրագրում, դյուրացնել ուսանողների միջմասնագիտական տեղափոխումները՝ ըստ միամյա ուսումնառության արդյունքների» (տե՛ս ԵՊԲՀ 2006-2010 թթ. ռազմավարական ծրագիրը, էջ 13): Այդպիսի միջմասնագիտական տեղափոխումները հնարավոր է դարձել համալսարանի բոլոր կրթական ծրագրերի («Բուժական գործ», «Ստոմատոլոգիա», «Դեղագիտություն») բակալավրիատի 1-ին կուրսի առարկայական ծրագրերի լրիվ նույնականության շնորհիվ (տե՛ս Համալսարանի բոլոր կրթական ծրագրերի ուսուցման 1-ին տարվա առարկայական պլանները և ծրագրերը):

Ծրագիրը դասընթացների կառուցվածքը և ուսումնառության արդյունքների գնահատման չափանիշները համապատասխանեցնելով ECTS-ի պահանջներին՝ նպաստում է «ուսանողների միջհամալսարանական տեղաշարժին եվրոպական բարձրագույն կրթական տարածքում», որը համահունչ է նաև Համալսարանի նպատակներին (տե՛ս ԵՊԲՀ 2006-2010 թթ. ռազմավարական ծրագիրը, էջ 13, «Բուժական գործ» մասնագիտությամբ «Բժիշկ» որակավորմամբ կրթական ծրագրի նկարագիրը»): Միայն 2011 թ-ին սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին այլ բուհերից 7 ուսանողներ են տեղափոխվել ԵՊԲՀ, «Բուժական գործ» կրթական ծրագրով սովորելու նպատակով (տե՛ս ուսումնամեթոդական վարչության արձանագրությունները):

**Չափորոշիչ բ. ՄԿԾ-ն հանդիսանում է ՄՈՒՀ-ի պլանավորման և ռեսուրսների բաշխման մաս:**

Համալսարանի աշխատակազմը, նյութական և ֆինանսական միջոցներն ընդգրված են Համալսարանի բոլոր ծրագրերի ապահովման համար և այդ պատճառով «Բուժական գործ» կրթական ծրագիրը, հանդիսանալով ԵՊԲՀ-ի պլանավորման բաղկացուցիչ մաս, չի առանձնացվում Համալսարանի ընդհանուր պլանավորումից և ռեսուրսների բաշխումից (տե՛ս «Տեղեկանք համալսարանի հիմնական միջոցների վերաբերյալ, 01.01.2012 թ.», ԵՊԲՀ ՊՈԱԿ-ի 2012թ. նախահաշիվը, համալսարանի բյուջեն, 2010-2012թթ ֆինանսական հաշվետվություն-ները):

Համալսարանի ֆինանսական միջոցները հիմնականում գոյանում են ուսման վարձերի միջոցով: Հաշվետու ժամանակաշրջանում Համալսարանում «Բուժական գործ» կրթական ծրագրով յուրաքանչյուր տարի միջինը սովորել են 3000 ուսանող կամ համալսարանի ուսանողության մոտ 75 տոկոսը: Հետևապես համալսարանի ֆինանսական մուտքերի պլանավորման մեջ իր ծանրակշիռ ներդրումով առանձնանում է քննարկվող կրթական ծրագիրը: ԵՊԲՀ-ում «Բուժական գործ» կրթական ծրագրով սովորողների մոտ 20%-ը սովորում է պետական պատվերով (նրանց ուսման վարձը վճարում է պետությունը):

Ծրագրի պատշաճ իրականացումն ապահովում է համապատասխան թվով և որակավորմամբ վարչական, պրոֆեսորա-դասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմը: Ծրագրի կատարման համար հատկացվում են համալսարանի պլանավորված բյուջեին համապատասխան ֆինանսական և նյութական միջոցներ (տե՛ս «Տեղեկանք համալսարանի հիմնական միջոցների վերաբերյալ, 01.01.2012թ», ԵՊԲՀ ՊՈԱԿ-ի 2012թ. նախահաշիվը, համալսարանի բյուջեն, 2010-2012թթ ֆինանսական հաշվետվությունները): Համալսարանի կլինիկական բազաների և ամբիոնների մեծ մասն ապահովում են հիմնականում «Բուժական գործ» ծրագրի կատարումը:

**Չափորոշիչ գ. ՄԿԾ մանրամասն նկարագրված է՝ ըստ շնորհվող որակավորման ուսումնառության ակնկալվող արդյունքների:**

ՄԿԾ-ի հիմքում դրված է ԵՊԲՀ ռազմավարական ծրագրի և վարած քաղաքականության դրույթներից բխող ելակետային մոտեցումն առ այն, որ անհրաժեշտ է մշակել և իրականացնել ինովացիոն կրթական ծրագրեր, որոնք բովանդակությամբ և մատուցման ձևերով գրավիչ են ուսանողների համար, համապատասխանում են մասնագիտության և սպառողների (գործատուների) արդի պահանջներին, բարձրացնում են շրջանավարտների ծառայունակությունը և նպաստում ծառայությունների ապրանքայնացմանը (տե՛ս ռազմավարական ծրագիրը, քաղաքականության ընթացակարգերը):

Ծրագրում բավարար չափով նկարագրված են յուրաքանչյուր կրթական աստիճանի բնութագրիչները, նպատակները, ինչպես նաև գիտելիքների, հմտությունների և կարողությունների հիման վրա ձևավորված ուսումնական վերջնարդյունքները (տե՛ս ՄԿԾ-ն):

Թյունինգ մեթոդաբանության սկզբունքներով մշակվել են ծրագրի ընթացքում ձեռք բերվող ընդհանուր և առարկայասպեցիֆիկ կարողությունների զատորոշիչ գործիքներն ու մեխանիզմները (տե՛ս ՄԿԾ-ի ընթացակարգերը), մանրամասը ներկայացվել են առարկայական ուսումնական ծրագրերի բովանդակությունն ու կառուցվածքը (մոդուլներն ու կրեդիտները): Յուրաքանչյուր առարկայի համար մշակվել և ներդրվել է ուսումնառության վերջնարդյունքների և կարողությունների հստակ ցանկ (տե՛ս ՄԿԾ-ն): Հարկ է նշել, որ ելքային ուսումնական արդյունքները վերաբերում են ինչպես դասընթացային մեկ միավորին կամ մոդուլին, այնպես էլ ուսումնառության ժամանակահատվածին՝ ծրագրի առաջին (բակալավրիատ) և երկրորդ աստիճաններին (մագիստրատուրա):

Ներկայումս ՈԱՇ-ի պահանջներին համահունչ անցում է կատարվում ուսուցման և ուսումնառության նոր մոտեցումների մշակմանը (մեթոդների տիպեր, տեխնիկա, ձևաչափեր), ինչպես նաև գնահատման մեթոդների զարգացմանն ու կատարելագործմանը (տե՛ս ցիկլային և կենտրոնական մեթոդական հանձնաժողովների նիստերի արձանագրությունները, հաշվետվությունները, գիտ. խորհրդի որոշումները):

Ներկայումս (2011-12թ.) ծրագրերում նախանշվող փոփոխություններն ու

ընդլայման միտումը խարսխված են ոչ միայն հետադարձ կապի, այլև առաջընթացի վրա՝ հաշվի առնելով հասարակության մեջ և բժշկական կրթության ակադեմիական դաշտում տեղի ունեցող զարգացումները: Բակալավրիատ – մագիստրատուրա երկաստիճան համակարգի գործունակության և աշխատանքային շուկայում ի հայտ եկած բարդությունների առկայությունը մոտիվացիոն գործոններ դարձան Թյունինգ մեթոդաբանության շրջանակում՝ անցնելու բժշկական բարձրագույն կրթության ինտեգրված մոդելին (4+2): Ըստ այդմ էլ ՄԿԾ-ում կատարվել և կատարվում են որոշակի փոփոխություններ և լրամշակումներ:

**Չափորոշիչ դ. ՄԿԾ-ն համապատասխանում է ՈԱՇ-ին, մասնագիտական կրթության որակավորումների բնութագրին և մասնագիտության պետական կրթական չափորոշչին:**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 31-ի «Հայաստանի Հանրապետության կրթության որակավորումների ազգային շրջանակը հաստատելու մասին» N 332-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 25-ի «Հայաստանի Հանրապետության կրթության որակավորումների ազգային շրջանակի ներդրումն ու գործարկումն ապահովող միջոցառումների կատարման ժամանակացույցը հաստատելու մասին» N 1230-Ա որոշումները 2012 թվականի սեպտեմբերից ԵՊԲՀ-ն լայնածավալ միջոցառումներ է սկսել՝ ուղղված համալսարանում բոլոր մասնագիտական կրթական և առարկայական ծրագրերի վերանայմանը և համապատասխանեցմանը ՈԱՇ-ին: Այդ աշխատանքները տարվում են ցայսօր, ինչի մասին վկայում են համապատասխան ամբիոններում և ցիկլային մեթոդական հանձնաժողովներում անընդհատ ընթացող քննարկումները (տե՛ս նիստերի արձանագրությունները և ծրագրերի «սևագիր» տարբերակները): Ինչ վերաբերում է ՈԱՇ-ի շրջանակներում ՄԿԾ-ի համապատասխանեցմանը մասնագիտական կրթության որակավորումների բնութագրին և մասնագիտության պետական կրթական չափորոշչին, ապա համաձայն «Հայաստանի Հանրապետության կրթության որակավորումների ազգային շրջանակի ներդրումն ու գործարկումն ապահովող միջոցառումների կատարման ժամանակացույցը հաստատելու մասին» N 1230-Ա որոշմանը՝ կրթության որակավորումների բնութագրերը պետք է հաստատվեն 2012 թվականի IV եռամսյակում, իսկ պետական կրթական չափորոշիչների հաստատումը՝ 2013 թվականի IV եռամսյա-

կում: Հետևաբար, այդ համապատասխանեցման մասին այսօր խոսելը ժամանակավրեպ է:

«Բուժական ֆակուլտետը» ԵՊԲՀ-ում գործում է հիմնադրման օրվանից՝ 1920 թվականից, 1999 թվականին այն վերանվանվել է «Ընդհանուր բժշկության ֆակուլտետ» և ներառյալ 2010 թվականը այդ ֆակուլտետի շրջանավարտները ստացել են «Բժշկի» որակավորում «Բուժական գործ» մասնագիտությամբ՝ համաձայն ՀՀ գործող վեցամյա չընդմիջվող դիպլոմավորված մասնագետի պատրաստման համար սահմանված կրթական չափորոշչի: Ուսուցումը տարվել է համապատասխան ՄԿԾ-ով, որը վերջին անգամ վերանայվել է 2006 թվականին՝ հաշվի առնելով 2003 թվականին Բեռլինում կայացած կրթության նախարարների համաժողովում ընդունված Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի որակավորումների համընդհանուր շրջանակի (The Framework of Qualification for the European Higher Area) և 2006 թվականին ընդունված «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի: Պետք է նշել, որ ՄԿԾ-ում սահմանված ուսումնառության վերջնարդյունքները ձևակերպվել են «Գիտելիքներ», «Հմտություններ», «Կարողություններ» պարտադիր եռյակ բնութագրիչների հիման վրա:

Քանի որ 2006 թվականից ԵՊԲՀ-ն անցել է ուսուցման երկաստիճան մոդելի, 2010 թվականի ապրիլի 4-ին ՀՀ կրթության նախարարի N 81-Ն հրամանով սահմանվեց բարձրագույն մասնագիտական կրթության բակալավրի որակավորման պետական կրթական չափորոշիչը 060100 «Բուժական գործ» մասնագիտությամբ «Բժշկության բակալավր» որակավորմամբ:

«Բուժական գործ» մասնագիտության գործող կրթական ծրագիրը համահունչ է ՀՀ կրթության նախարարության կողմից սահմանված բակալավրի որակավորման պետական կրթական չափորոշչին: Ինչ վերաբերում է բժշկական բարձրագույն կրթության մագիստրոսի որակավորման պետական կրթական չափորոշչին, ապա վերջինս դեռ հաստատված չէ և գտնվում է վերջնական մշակման փուլում: Հավելենք, որ միայն 2013 թվականի ամռանը «Ընդհանուր բժշկության ֆակուլտետը» կավարտեն առաջին մագիստրոսները: Ըստ էության, այդ չափորոշիչը հիմնված է լինելու այն սկզբունքային դրույթների և վերջնարդյունքների վրա, որոնք գործել են վեցամյա չընդմիջվող դիպլոմավորված մասնագետ պատրաստելու համար, քանզի երկաստիճան կրթական ցիկլն ավարտելուց հետո շրջանավարտին պետք է շնորհվի

«Բժշկի» որակավորում «Բուժական գործ» մասնագիտությամբ: Պրոբլեմի հիմնաքարը բակալավրի և մագիստրոսի գործառույթների տարրաբաժանումն է:

**Չափորոշիչ ե. ՄԿԾ-ն բովանդակային առումով հստակ մշակված է համահունչ նմանատիպ այլ մասնագիտության կրթական ծրագրերի հետ և նպաստում է ուսանողների ու դասախոսական կազմի շարժունությանը և միջազգայնացմանը:**

Նախկին Խորհրդային Միության անդամ երկրների ՄՈՒՀ-երը, այդ թվում և բարձրագույն բժշկական ուսումնական հաստատությունները, գտնվելով միևնույն կրթական, իսկ բժշկական բուհերի դեպքում՝ նաև առողջապահական համակարգում, փաստացի կիրառել են միևնույն ՄԿԾ-ները (տե՛ս համապատասխան ՄԿԾ-ն): Հետխորհրդային ժամանակահատվածում նախկին կրթական համակարգում գործած ՄԿԾ-ները շատ բուհերում գրեթե պահպանվել են նույնությամբ, կամ կրած փոփոխությունները եղել են ոչ հիմնարար՝ ադապտիվ բնույթի: Այսպես Մոսկվայի Ի.Մ.Սեչենովի անվ. առաջին պետական բժշկական համալսարանի «Բուժական գործ» որակավորման և ԵՊԲՀ «Բժիշկ» որակավորման ՄԿԾ-ները թե՛ առարկաների, և թե՛ դրանց հատկացված ժամաքանակի ու կրեդիտների առումով համադրելի են (տե՛ս, Սեչենովի ՄԿԾ-ի կայքը և ԵՊԲՀ ՄԿԾ-ն): Նույնն է իրավիճակը նաև շատ այլ բժշկական բուհերի դեպքում (տե՛ս այլ բժշկական բուհի ՄԿԾ-ն): ՈՒստի նշված բուհերի միջև ուսանողների շարժունությունը՝ պայմանավորված ծրագրային առանցքային տարբերությունների բացակայությամբ, շարունակվել է հետխորհրդային ժամանակահատվածում, առկա է եղել հաշվետու ժամանակահատվածում և գործում է ցայսօր: Օրինակ՝ միայն 2011թվ-ին ԱՊՀ տարբեր երկրներից 5 ուսանող է տեղափոխվել ԵՊԲՀ:

ԵՊԲՀ-ն հաշվետու ժամանակահատվածում հասցրել է մասնակցել, իսկ ներկայումս գնալով ավելի ակտիվ շարունակում է ընդգրկվել այնպիսի հայտնի միջազգային կրթական ծրագրերում, ինչպիսիք են Tempus-ը, Erasmus Mundus-ը, Lineus Palmae-ն և այլն, ինչպես նաև ունի կնքած բազմաթիվ միջազգային պայմանագրեր, որոնք հնարավորություններ են ստեղծում ԵՊԲՀ թե ուսանողների և թե պրոֆեսորադասախոսական կազմի համար կատարել փորձի փոխանակումներ, վերապատրաստումներ, անցկացնել ուսումնաարտադրական ամառային պրակտիկաներ աշխարհի բազմաթիվ երկրների բժշկական բուհերում և նրանց կից կլինիկաներում: Այսպես, Օրինակ՝ ԵՊԲՀ-ն 2011թ. ընդգրկվելով Erasmus Mundus

ծրագրի Alrakis action 2 նախագծում հնարավորություն ստեղծեց ուսանողների համար ուսման մինչև 36 ամիս տևողությամբ դասընթաց անցկացնել եվրոպական մի շարք բուհերում (տե՛ս համագործակցության համաձայնագիրը) և այժմ ընդհանուր բժշության ֆակուլտետի 2 ուսանողներ նշված նախագծի շրջանակներում գտնվում են Իսպանիայի Սանտյագո դե Կոմպոստելլա համալսարանում (տե՛ս նամակ հրավերները և կնքած պայմանագրերը), իսկ նույն ծրագրի 2-րդ հայտով դիմած ուսանողներից ևս 3-ը ճանաչվել են հաղթող (տես՝ համապատասխան նամակները) և մոտ ժամանակներս կմեկնեն Եվրոմիության տարբեր բուհեր՝ կրթական ծրագրի մի հատվածն անցկացնելու նպատակով:

ՄԿԾ պարտադիր մաս է ուսանողների ամառային ուսումաարտադրական պրակտիկաները: 2011 թվականի փետրվարին վերամշակվեցին և կենտրոնական մեթոդական հանձնաժողովի կողմից հաստատվեցին ուսման արտադրական պրակտիկայի ծրագրերը՝ որտեղ ընդգրկված են յուրաքանչյուր ֆակուլտետի և կուրսի համար մանիպուլյացիաների ցանկը, որոնց ուսանողը պետք է մասնակցի կամ ինքնուրույն կատարի (տե՛ս պրակտիկայի վերաբերյալ հաշվետվությունը): Ավելին, հաշվի առնելով առկա միջազգային պայմանագրերը (IFMSA, IADS, IPSF), ամառային պրակտիկայի ծրագրերի բովանդակությունն ադապտացված տարբերակով ընդգրկվեց նաև մեկնող ուսանողների course book-երում և արդեն 2011-2012 ուս տարվա պրակտիկայի ծրագրերն ունիֆիկացված էին Երևանում, ՀՀ մարզերում, Իրանում Հնդկաստանում, ԱՊՀ, ԵՄ երկրներում և այլ վայրերում պրակտիկա անցնող ուսանողների համար:

**Չափորոշիչ զ. ՄԿԾ-ի ուսումնառության ակնկալվող արդյունքները բավարարում են ուսանողների և այլ շահակիցների կարիքները:**

2006 թ.-ին ԵՊԲՀ-ի գիտ. խորհրդի նիստում հաստատված «Բուժական գործ» մասնագիտությամբ «Բժիշկ» որակավորմամբ կրթական ծրագրի նկարագիրը հստակ սահմանում է շրջանավարտի գործառույթները և ՄԿԾ-ի վերջնարդյունքները: ՄԿԾ-ում ներառված առարկայական բոլոր ծրագրերը սահմանում են ուսումնառության արդյունքներ, որոնք ընդհանուր առմամբ համապատասխանում են ՀՀ Կրթության և Գիտության նախարարության կողմից մշակված որակավորումների ազգային շրջանակին:

Այնուամենայնիվ, գիտական հետազոտության նպատակով շահակիցների շրջանում անցկացված մի շարք հարցումները վկայում են այն մասին, որ ՄԿԾ-ն ամբողջությամբ և առարկայական ծրագրերը մասնավորապես, որոշակի վերանայման կարիք ունեն: Այսպես. ըստ հարցման տվյալների դասախոսների և կլին. օրդինատորների մեկ երրորդը կարծում է, որ ՄԿԾ-ն վերանայման կարիք ունի, որպեսզի ներկայիս ուսումնական ծրագիրը աշխատաշուկայի համար կոմպետենտ բժիշկներ չի պատրաստում: Հարցված բժիշկների և կլին. օրդինատորների շուրջ 30%-ի կարծիքով ուսումնառության ընթացքում ստացված գիտելիքները լիովին բավարար չեն մասնագիտական գործառույթներ իրականացնելու համար (տե՛ս գիտական աշխատությունը):

Անցկացված մեկ այլ հարցման արդյունքները վկայում են այն մասին, որ ուսումնառության ընթացքում ձեռք բերված պրակտիկ հմտությունները նույնպես լիովին բավարար չեն մասնագիտական գործունեություն ծավալելու համար (տե՛ս ինքնավերլուծության զեկույցի ինստիտուցիոնալ հավատագրման յոթերրորդ չափանիշը ներկայացնող հատվածը):

Հաշվի առնելով հարցման արդյունքները և առկա իրավիճակը՝ 2008 թ-ից ՄԿԾ-ի շրջանակներում կատարվել են մի շարք բարեփոխումներ: Այսպես, օրինակ՝ առարկայական որոշ ծրագրերի հորիզոնական ինտեգրացիան (տարբեր առարկայական ծրագրերում դասավանդվող նյութերի համաժամացում), քննությունների համակարգչայնացումը (առաջին կուրսի ուսանողները առարկա-յական ծրագրերի քննությունները հանձնում են կենտրոնացված տարբերակով), որոշ կրեդիտների տեղափոխման հնարավորության ստեղծումը մինչև ավարտական կուրս (ուսանողների համար հնարավորություն է ստեղծվել ակադեմիական պարտքերը տեղափոխել մինչև ավարտական կուրս) և այլն, ՄԿԾ-ի ուսումնառության վերջնարդյունքներն առավել հասանելի կդարձնեն: Վերոնշյալ փոփոխությունները հիմնականում դրական են գնահատվել ուսանողների և այլ շահակիցների կողմից (տե՛ս հարցման արդյունքները):

Այսպիսով կարող ենք փաստել, որ ՄԿԾ-ն հստակ սահմանում է ուսումնառության վերջնարդյունքներ, որոնք համահունչ են ՀՀ ԿԳՆ կողմից մշակված որակավորումների ազգային շրջանակին և «Բուժական գործ» մասնագիտության մասնագիտական կրթության բակալավրի աստիճանի պետական կրթական

չափորոշիչներին (հաստատված ՀՀ ԿԳ նախարարի 2010թ-ի 03.04 N 81-Ն հրամանով), սակայն, ըստ շահակիցների, ուսումնական գործընթացը և առարկայական ծրագրերը վերանայման կարիք ունեն: Պարբերական բնույթ չի կրում նաև ՄԿԾ-ի վերջնարդյունքների և աշխատաշուկայի պահանջների համեմատական գնահատումը, ինչպես նաև արտաքին շահակիցների ընդգրկումը առարկայական և կրթական ծրագրերի մշակման և գնահատման գործընթացներում: Չի կատարվում նաև աշխատաշուկայում ՄԿԾ-ի շրջանավարտների զբաղվածության և մաս-նագիտական գործունեության հետագա մշտադիտարկում:

**Չափորոշիչ Է. Առկա են հստակ ընթացակարգեր ու մեխանիզմներ , որոնք ապահովում են ՄԿԾ-ի մշակման, հաստատման, մշտադիտարկման, գնահատման և բարելավման իրականացումը:**

Ըստ ռազմավարական ծրագրի նպատակ 2-ի համալսարանում պետք ստեղծվեն մեխանիզմներ և չափանիշներ՝ կրթական ծրագրերի բովանդակության, ուսուցման արդյունքների ինքնավերլուծության, ինքնագնահատման և հետագա մոնիթորինգի համար (տե՛ս համալսարանի ռազավարական ծրագիրը, էջ 13):

2006թ-ին համալսարանում մշակվեց և հաստատվեց կրթական ծրագրի մշակման հաստատման և մշտադիտարկման ընթացակարգը, իսկ 2011թ-ին՝ համալսարանի կրթության որակի գնահատման և ապահովման կենտրոնի կողմից՝ կրթական ծրագրի գնահատման և բարելավման ընթացակարգը (տե՛ս ընթացակարգերը):

Ըստ կրթական ծրագրերի մշակման և հաստատման ընթացակարգի ծրագիրն անցնում է հետևյալ փուլերը.

ա. ծրագրի պլանավորում,

բ. մշակում,

գ. ներդրում և իրականացում:

Ծրագրի պլանավորման ժամանակ ներկայացվում է նոր ծրագրի ընդհանուր նկարագիրը կամ գործող ծրագրում կատարվում են փոփոխություններ, որոնց հիմքում ընկած են աշխատաշուկայի պահանջները և միտումները:

Պլանավորման ժամանակ հստակ ներկայացվում են մասնագիտության որակավորման նպատակը, խնդիրները, տևողությունը և վարձաչափը: Այնուհետև

մշակվում են ծրագրի ուսումնական պլանը, մոդուլները, առարկայական ծրագրերը, ուսումնական կրեդիտները, վերջնարդյունքները, ինչպես նաև կրթական ռեսուրս-ները և օժանդակ ծառայությունները:

Ծրագրի մշակմանը հաջորդում է ծրագրի ներդրման և իրականացման համար անհրաժեշտ բաղադրիչների՝ ուսումնառության գործընթացների կազմակերպման, օժանդակ ծառայությունների մատուցման, ուսումնական գործընթացի ռեսուրսային ապահովման, ուսանողների գիտելիքների ընթացիկ և ավարտական ատեստավորման ներդրումը:

Կրթական ծրագրի որակի ապահովման նպատակով կրթական ծրագիրն անցնում է ներբուհական հետևյալ փուլերը.

1. ծրագրի մշակման արտոնում,
2. ծրագրի հավանության ստացում,
3. ծրագրի ընթացիկ մոնիթորինգ,
4. ծրագրի գնահատում և վերանայում:

Ծրագրի մշակման արտոնման ժամանակ գնահատվում է ծրագրի հիմնավորումը և համապատասխանությունը բուհի առաքելությանը: II փուլի ժամանակ գնահատվում է ծրագրի մշակման որակը և թե որքանով է բուհը կարող իրականացնել այն համաձայն ստանդարտների (կատարվում է ծրագրի լիցենզավորում՝ տվյալ ծրագրով ընդունելություն կազմակերպելու թույլտվության ստանալու համար):

Մոնիթորինգի միջոցով գնահատվում է ծրագրի որակը՝ ստանդարտներն իրականցնելու փուլում, իսկ գնահատման և վերանայման փուլերում գնահատվում են ծրագրի համապատասխանությունն իր նպատակին՝ ամբողջական ցիկլի արդյունքներով:

«Բուժական գործ» ծրագրի ուսումնական պլանի, ելքային արդյունքների և որակավորման բնութագրիչների (ըստ մասնագիտական կրթության որակա-վորումների ազգային հենքի և համապատասխան պետական կրթական չափորոշիչի պահանջների) համապատասխանությունը հաստատվել է համապատասխան ցիկլային մեթոդական հանձաժողովների նիստերում (տե՛ս արձանագրությունները): Այդ հանձնաժողովներում քննարկվել և հավանության են ստացել այն առարկայական ծրագրերը, որոնց բովանդակությունը և ելքային արդյունքները համապատասխանել են տվյալ մասնագիտության որակավորման բնութագրիչներին (ծրագրերը

հաստատվել են՝ անցնելով քննարկումների փուլը, որտեղ արվել են առաջարկություններ, դիտողություններ, տե՛ս ցիկլային մեթոդական հանձնաժողով-ների արձանագրությունները):

Համապատասխան ցիկլային մեթոդական հանձնաժողովների կարծիքների հիման վրա կենտրոնական մեթոդական հանձնաժողովը տվել է իր գնահատականը և այն ներկայացրել համալսարանի գիտական խորհրդի քննարկմանը և հաստատմանը: «Բուժական գործ» կրթական ծրագիրը հաստատվել է համալսարանի գիտական խորհրդի նիստում:

«Բուժական գործ» կրթական ծրագիրը ենթարկվել է մոնիթորինգի, որի միջոցով գնահատվել է ուսումնական գործընթացի արդյունավետությունը, ուսուցման մեթոդների և տեխնոլոգիաների արդիականությունը և ռեսուրսային կարիքները:

Այսպես. ուսանողների շրջանում անցակացվել են հարցումներ, որի միջոցով պարզվել է ուսանողների բավարարվածության մակարդակը ծրագրի (նրա առանձին դասընթացների) բովանդակությունից, մատուցման մեթոդներից, ուսանողների տեսանկյունից առավել հաջողված և առավել անհաջող կամ ավելորդ ծրագրային տարրերից, ինչպես նաև ծրագրային փոփոխությունների անհրաժեշտությունից (տե՛ս հարցումների արդյունքները):

Շրջանավարտների և գործատուների շրջանում անցկացրած հարցումները պարզել են ծրագրի համապատասխանությունը տվյալ մասնագիտության աշխատատեղերի պահանջներին, ծրագրի արդիականությունը և ծրագրի հեռանկարները կադրային պահանջարկի տեսանկյունից (տե՛ս հարցումների արդյունքները):

Հարցումների արդյունքների վերլուծությունը ներկայացվել է համապատասխան հանձնաժողովների քննարկմանը: Քննարկումների արդյունքում արվել են առաջարկություններ՝ կրթական ծրագրի առանձին դետալների փոփոխության վերաբերյալ:

Յուրաքանչյուր կիսամյակ հարցումներ է անցկացվել տվյալ ծրագրի առարկայական դասընթացներն անցած ուսանողների շրջանում, որտեղ գնահատվել են դասընթացի մեթոդաբանական և բովանդակային բաղադրիչների վերաբերյալ ուսանողների բավարարվածությունը (տե՛ս հարցումների արդյունքները):

## Լավագույն փորձի օրինակներ

1. «Բուժական գործ» մասնագիտությամբ գործող կրթական ծրագիրը համահունչ է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից սահմանված բակալավրի որակավորման պետական կրթական չափորոշչին:

2. Համալսարանում առկա են կրթական ծրագրի մշակման, հաստատման, մշտադի-տարկման, գնահատման և բարելավման ընթացակարգեր:

3. Համալսարանում համապատասխան հանձնաժողովների կողմից մշտադիտարկ-վում է ծրագրի որակը և արվում են փոփոխություններ:

4. Ներքին և արտաքին շահակիցների շրջանում կատարվում են հարցումներ՝ ծրագրի և նրա առանձին բաղադրիչների վերաբերյալ:

## Ոչ այնքան լավ փորձի օրինակներ

1. Կրթական առաջին և երկրորդ աստիճաններում դասավանդվող առարկաների ցանկի, բովանդակության և ուսուցման վերջնարդյունքներն առավել թափանցիկ ներկայացնելու անհրաժեշտություն:

2. Մետա-մակարդակային միջազգային բնութագրիչների («Դուբլինյան բնութագ-րիչներ») մասին ոչ լիարժեք տեղեկացվածություն: Մեր և արևմտյան կրթական դպրոցների դասավանդվող առարկաների մոդուլների, պահանջվող վերջնարդյունքների ներդաշնակեցման խնդրի, ինչպես նաև միասնական տերմինաբանության մշակման հիմնահարցի առկայություն:

3. «Բուժական գործ» մասնագիտությամբ մագիստրոսական կրթական ծրագրի պետական չափորոշիչի բացակայություն:

4. Միջազգային փոխանակումների մասնակցած ուսանողներին դասախոսների փոքր թիվ:

5. Աշխատաշուկայում ՄԿԾ-ի շրջանավարտների զբաղվածության և մասնագիտական գործունեության հետագա մշտադիտարկման բացակայություն:

# Չ Ա Փ Ա Ն Ի Շ 2

## Դասախոսական կազմ

**ՄԿԾ-ն ապահովված է մասնագիտական անհրաժեշտ որակավորումներ ունեցող դասախոսական կազմով՝ ՄԿԾ-ի նպատակներն իրականացնելու համար:**

**Հավակնությունները:** *Համալսարանը ՄԿԾ-ի իրականացման շրջանակներում ձգտում է դասախոսի մասնագիտական որակներին, ընտրությանը և կատարելագործմանը ներկայացվող հստակ պահանջների մշակման միջոցով հասնել մասնագիտական անհրաժեշտ որակավորումներ ունեցող դասախոսական կազմով համալրմանը:*

**Չափորոշիչ ա. ՄԿԾ-ի համար սահմանված են դասախոսական կազմի մասնագիտական որակավորումներին ներկայացվող հստակ պահանջներ և դասախոսական կազմի հավաքագրման քաղաքականություն և ընթացակարգեր:**

Որակյալ կադրային ներուժի ձևավորման և զարգացման համար համալսարանը որդեգրել էր հետևյալ քաղաքականությունը.

ա. նորացնել և երիտասարդացնել դասախոսական կազմը՝ ասպիրանտուրայի տեղերի ավելացման, ասպիրանտների հետ պայմանագրեր կնքելու և դասախոսական կազմի որակներին առաջադրվող պահանջները վերանայելու ճանապարհով,

բ. մշակել պրոֆեսորա-դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ,

գ. մշակել պրոֆեսորա-դասախոսական կազմի գործունեության գնահատման հստակ մեխանիզմներ և ընթացակարգեր,

դ. մշակել դասախոսների ընտրության ընթացակարգեր,

ե. բարելավել դասախոսների կատարելագործման համալսարանական ծրագիրը՝ ապահովելով դասախոսական կազմի անխտիր մասնակցությունն այդ ծրագրին (տե՛ս ռազմավարական ծրագիրը, էջ 15, 16, կցվում է):

Մինչև 2007թ-ը համալսարանում պրոֆեսորադասախոսական կազմի ընտրությունն անցկացվում էր մրցույթային կարգով: 2007թ-ից մինչև 2011թ-ը պրոֆեսորադասախոսական կազմի ընտրությունն իրականացվել է ամբիոնի վարիչի

համաձայնությամբ՝ ռեկտորի հետ կնքած ուղղակի պայմանագրի հիման վրա: Դասխոսական կազմի համալրման նշված ձևը կրել է ժամանակավոր բնույթ՝ դասախոսական կազմը առավել օպերատիվ ճանապարհով թարմացնելու համար, ինչը չի հակասել ՀՀ օրենսդրությանը, բուհի դասախոսական կազմի ընտրության կանոնակարգին:

2011թ-ից համալսարանի դասախոսների ընտրությունը կատարվում է մրցույթային կարգով՝ համաձայն «Դասախոսների ընտրության ընթացակարգի»-ի (տե՛ս 25.05.2011թ գիտական խորհրդի թիվ 3 նիստի արձանագրությունը և ընթացակարգը):

Ըստ այդ ընթացակարգի, յուրաքանչյուր ուսումնական տարի, ռեկտորը սահմանում է ընթացիկ ուսումնական տարում աշխատանքային պայմանագրերն ավարտվելու կապակցությամբ առաջացող թափուր մրցույթային տեղերի ցանկը: Սահմանված կարգով մրցույթ հայտարարելու անհրաժեշտության մասին մարդկային ռեսուրսների բաժինը /կադրերի բաժինը/ տեղեկացնում է համալսարանի գիտական խորհրդի քարտուղարությանը՝ համապատասխան դասախոսի աշխատանքային պայմանագրի ժամկետը լրանալուց առնվազն 80 օր առաջ: Թափուր տեղերի վերաբերյալ հայտարարությունը դրվում է համալսարանի պաշտոնական կայքում և 2000 տպաքանակ ունեցող մամուլում՝ ընտրության օրվանից առնվազն 2 ամիս առաջ: Մրցույթով անցնելուց հետո ռեկտորը, ելնելով որակավորման հանձնաժողովի դասախոսին տրված գնահատականից և գիտական խորհրդի որոշումից, դասախոսի հետ կնքում է մինչև 5 տարի (1-ից 5) ժամկետով պայմանագիր:

2011-12թթ. ընթացքում պրոֆեսորադասախոսական կազմի թափուր պաշտոնների համար հայտարարված մրցույթին մասնակցել են «Բուժական գործ» կրթական ծրագիրն իրականացնող 30 ամբիոնների 325 դասախոս, որոնցից մրցույթով անցել են 295-ը: Մրցույթի մասնակիցների 6%–ը չեն երաշխավորվել որակավորման հանձնաժողովի և ամբիոնների կողմից և/կամ չեն ընտրվել գիտական խորհուրդների կողմից (տե՛ս որակավորման հանձնաժողովի, ամբիոնական նիստերի և գիտական խորհրդների արձանագրությունները): Պետք է հավելել, որ որակավորման հանձնաժողովի կամ ամբիոնների կողմից չերաշխավորվելու դեպքում թեկնածուն իրավունք ունի մասնակցել համալսարանի գիտական խորհրդների կողմից կազմակերպված տվյալ թափուր տեղի համար հայտարարված

մրցույթին: Այսօր, երբ մրցույթային կարգով ընտրվել են 325 դասախոս, սկսվել է պրոֆեսորադասախոսական կազմի առանձին տարակարգերի (պրոֆոսոր, դոցենտ, ասիստենտ) համար մշակվել ինչպես նրանց գործունեության տարբեր բնագավառների (ուսումնամեթոդական, գիտական, կլինիկական և այլն), այնպես էլ ընդհանուր գործունեության համար պահանջվող բալային մինիմումի սահմանները, ինչը թույլ կտա մշտադիտարկման միջոցով տալ գործող ընթացակարգի և դասախոսների ընտրության կիրառվող քաղաքականության գնահատականը: Ըստ գործող կանոնակարգի, առանց մրցույթի, միայն ռեկտորի հետ կնքած պայմանագրի հիման վրա, կարող են աշխատանքի ընդունվել միայն կարճաժամկետ ծառայություններ մատուցող դասախոսները, որոնք 20.10.2011 դրությամբ, տվյալ կրթական ծրագրում ընդամենը 8-ն են:

**Չափորոշիչ բ. ՄԿԾ-ի շրջանակներում սահմանվել է դասախոսական կազմի պարբերաբար գնահատման հստակ քաղաքականություն և ընթացակարգեր, որոնք նպաստում են դասախոսների մասնագիտական կարիքների վերահսկմանը և զարգացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում՝ մինչև 2010թ-ը համալսարանում դասախոսական կազմի գնահատումը կազմակերպվել է յուրաքանչյուր կիսամյակում. «Դասախոսը ուսանողի աչքերով» հարցումների կազմակերպման ճանապարհով: Հարցաթերթում ընդգրկված են եղել դասախոսի մասնագիտական և մանկավարժական որակների գնահատմանն առաջադրվող 6 հարց: Հարցման արդյունքները հաշվի են առնվել դասախոսի հետ պայմանագրերը կնքելիս: Սակայն, հասկանալի էր, որ դասախոսի գնահատման, ինչպես նաև պայմանագրեր կնքելու համար, սա բավարար պայման չէր կարող լինել, որովհետև որոշ դեպքերում հարցումը կարող է արտահայտել ուսանողների սուբյեկտիվ կարծիքը: Ուստի հարցման բացասական արդյունքները (5 բալանոց համակարգում 3-ից ցածր ստացած գնահատական) պայմանագիրը չեղյալ համարելու և/կամ նոր պայմանագիր կնքելու համար որպես հիմք դիտարկվել են միայն այն դեպքերում, երբ 5 տարվա ընթացքում, (այսինքն 10 կիսամյակում) դասախոսը բացասական գնահատական է ստացել 3 և ավել անգամ:

Համալսարանի բարեփոխումների և ինտեգրացիայի բաժնի կողմից 2008-2009թթ. մշակվեց «Դասախոսի որակավորման գնահատման հարցաթերթ»-ը, որը

քննարկվեց համալսարանի բոլոր ամբիոններում, արվեցին առաջարկություններ, որոնց հիմնական մասն ընդունվեց: Հարցաթերթի վերջնական տարբերակը կրկին քննարկվեց ամբիոնի վարիչների և ուսումնական գծով պատասխանատուների հետ անցկացրած հանդիպման ժամանակ, որից հետո միայն այն հաստատվեց համալսարանի կենտրոնական ցիկլային մեթոդական հանձնաժողովում (տե՛ս կենտրոնական ցիկլային մեթոդական հանձնաժողովի արձանագրությունը, հարցաթերթը):

2011թ-ից, երբ համալսարանում վերականգնվեց դասախոսների մրցույթով ընտրության կարգը, ընտրության հիմքում դրվեց դասախոսի որակավորման գնահատման քաղաքականությունը: Համաձայն այդ քաղաքականության, մշակված համակարգի միջոցով, 5 տարվա կտրվածքով գնահատվում են դասախոսի գործունեության բոլոր՝ ուսումնամեթոդական, գիտական, հետբուհական շարունակական կրթության, կլինիկական, վարչական և հասարակական բնագավառները, ինչպես նաև հաշվի է առնվում ուսանողների կողմից դասախոսին տրված գնահատականը: Հարցաթերթում ընդգրկված է շուրջ 80 հարց (տե՛ս հարցաթերթը):

Մրցույթին մասնակցող անձը պահանջվող փաստաթղթերի հետ միասին լրացնում և հանձնում նաև այս հարցաթերթը: Համապատասխան ֆակուլտետի գիտական քարտուղարը, ներկայացված փաստաթղթերի հիման վրա, ստուգում է լրացված հարցաթերթերը, հաշվում բալերը և ներկայացնում համալսարանի «Դասախոսի որակավորման մշտական հանձնաժողովին» (տե՛ս հանձնաժողովի կազմը), որը հատուկ հրավիրած նիստում, քննարկում է որակավորման հարցաթերթի արդյունքում տրված գնահատականը, ամբիոնի վարիչների, ուսումնամեթոդական վարչության ղեկավար կազմի և ցիկլային մեթոդական հանձնաժողովների կողմից պարբերաբար՝ տարին 1-2 անգամ անցկացված դասալսումների վերլուծությունների արդյունքները (տե՛ս ամբիոնի նիստերի դասալսումների և դրանց քննարկումների արձանագրությունները) և այնուհետև դասախոսի հետ ունեցած անմիջական հարցազրույցից հետո կայացնում է որոշում՝ երաշխավորել կամ չերաշխավորել դասախոսի հետագա աշխատանքային գործունեությունը: Այդ որոշումն այնուհետև ներկայացվում է ֆակուլտետային գիտական խորհրդի քննարկմանը, որտեղ և դասախոսի վերաբերյալ կազմակերպած փակ գաղտնի քվեարկության արդյունքում

իրականացվում է ընտրություն: Պետք է հավելել, որ անկախ «Դասախոսի որակավորման հանձնաժողովի» որոշումից, դասախոսը կարող է մասնակցել ֆակուլտետային խորհրդի կողմից կազմակերպված ընտրության գործընթացին:

Գնահատման նման գործընթացը կազմակերպվում է յուրաքանչյուր դասախոսի համար 1-5 տարվա պարբերությամբ՝ կախված նրա հետ կնքած պայմանագրում աշխատանքային գործունեության վերաբերյալ սահմանված ժամկետից:

**Չափորոշիչ գ. ՄԿԾ-ն նպաստում է դասախոսական կազմի կայացմանը և մասնագիտական առաջընթացին:**

ՄԿԾ-ի մաս կազմող առարկայական ծրագրերը հաստատվում և պարբերաբար վերանայվում են մեթոդական ցիկլային հանձնաժողովների կողմից: Առարկայական ծրագրերը պարբերաբար մեթոդաբանական առումով թարմեցվում են համապատասխանելու համար գիտության առաջընթացին և իրենց մեջ են ներառում նորագույն գիտական հետազոտությունների արդյունքները: Երկու շաբաթը մեկ անգամ ամբիոններում կազմակերպվում են մեթոդական ամբիոնական նիստեր, որոնց ընթացքում դասախոսներից յուրաքանչյուրն իրավունք ունի ներկայացնել իր կարծիքը դասավանդվող նյութի վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել նոր նյութեր: Քննարկվող գիտական նորությունների մի մասը համապատասխան քննարկում-ներից և ցիկլային մեթոդական հանձնաժողովում հաստատվելուց հետո ընդգրկվում են առարկայական ծրագրերում (տե՛ս ամբիոնների մեթոդական նիստերի մատյանները):

ԵՊԲՀ պրակտիկայի բաժնի կողմից տարեկան երկու անգամ ուսանողների շրջանում անցկացվում են «Դասախոսն ուսանողի աչքերով» հարցումներ, որոնց ընթացքում ուսանողները գնահատում են դասավանդվող նյութի արդիականությունը, նորագույն տվյալների մատուցումը, դասախոսների մասնագիտական որակները, դասախոսի դասը մատուցելու ունակությունը և այլն: Այդ հարցումների արդյունքները հաշվի են առնվում դասախոսների մրցույթային կարգով վերընտրության ժամանակ: Երեք և ավել անգամ ուսանողների կողմից բացասական գնահատված դասախոսների հետ պայմանագրերը չեն շարունակվում: Դասախոսական կազմի վերընտրության և նրանց հետ պայմանագրեր կնքելուց առաջ լրացվող հարցաթերթերում կարևոր տեղ են զբաղեցնում նաև մասնագիտական

վերապատրաստումների, գիտական աշխատանքների, տպագրությունների և այլնի վերաբերյալ հաղորդումները, ինչը, անկասկած, դասախոսների մասնագիտական առաջընթացին նպաստող համապատասխան միջավայր է ստեղծում (տե՛ս դասախոսների ընտրության ընթացակարգը, կցվում է):

Պարբերաբար կազմակերպվում են նաև հանդիպումներ՝ ուսանողների առանձին խմբերի հետ, որոնց ընթացքում քննարկվում են ուսանողների առաջարկությունները դասավանդվող նյութի, ուսումնառության պրոցեսի վերաբերյալ:

Վերը նշված հարցումների և հանդիպումների արդյունքները քննարկվում են նաև մեթոդական ցիկլային հանձնաժողովներում և ամբիոնական նիստերում:

Հարկ է նշել նաև, որ մասնագիտության կրթական ծրագիրը չի սահմանում պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ: Այն առաջնորդվում է համալսարանական մակարդակով սահմանված դասախոսների տարբեր տարակարգերին ուղղված պահանջներով, որոնք հիմնված են միայն դասախոսի բազային և հետդիպլոմային կրթության, գիտական աստիճանի, զբաղեցրած պաշտոնի վրա և չեն ներառում նրա կողմից կատարած ուսումնամեթոդական աշխատանքների ծավալն ու ուղղվածությունը, մասնագիտական որակների համապատասխանությունը տվյալ կրթական ծրագրին և այլն:

Այսպիսով կարող ենք եզրակացնել, որ համալսարանական միջավայրը ընդհանուր առմամբ նպաստում է դասախոսական կազմի կայացմանը և նրա առաջընթացին, սակայն ՄԿԾ-ն չի սահմանում այս ոլորտը կանոնակարգող ընթացակարգ և ամբողջական քաղաքականություն:

**Չափորոշիչ դ. Հիմնական դասախոսական կազմն ապահովում է ՄԿԾ-ի կայուն իրականացումը:**

Համալսարանի 32 ամբիոններ գտնվում են ընդհանուր բժշկության ֆակուլ-տետի ենթակայության տակ, սակայն համալսարանական մյուս ամբիոնները նույնպես դասավանդում են ՄԿԾ-ի ուսանողներին: Ընդհանուր առմամբ համալսարանում այսօր աշխատում են 1114 դասախոս, որոնցից 173-ը գիտությունների դոկտոր են, նրանցից 107 –ը ունեն պրոֆեսորի կոչում, 517-ը գիտությունների թեկնածու են, որոնցից 201-ը ունեն դոցենտի կոչում, 424-ը

ասիստենտներ են: Ուսանող-դասախոս հարաբերակցությունը 10.10.2012թ դրությամբ կազմում է 5530 : 1042 = 1:5:

Հարկ է նշել, որ նախադիպլոմային կրթական մակարդակում չկա ամբիոնների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի հստակ տարաբաժանում ըստ տարբեր մասնագիտության կրթական ծրագրերի և ամբիոնների բացարձակ մեծամասնությունը դասավանդում է մասնագիտության կրթական բոլոր ծրագրերում սովորող ուսանողներին՝ համապատասխան ծրագրի սահմաններում:

Համալսարանն իր ռազմավարական ծրագրում հստակ կարևորում է առարկայական ծրագրերը գիտակ, կոմպետենտ դասախոսական կազմով ապահովելու, որակյալ կադրային ներուժ ձևավորելու անհրաժեշտությունը: Այդ նպատակով հաշվետու ժամանակաշրջանում կատարվեցին մի շարք միջոցառումներ. ձևավորվեցին դասախոսական կազմի մրցույթային հիմունքներով վերընտրության ընթացակարգը և նրանց գործունեության բոլոր բնագավառներն արտացոլող հարցաթերթերը, 2 տարի առաջ վերանայվեց նպատակային ասպիրանտուրայի տեղերի հատկացման քաղաքականությունը՝ ավելի շատ տեղեր հատկացվեցին այն մասնագիտություններին (ախտաֆիզիոլոգիա, ախտաբանական անատոմիա, ֆթիզիատրիա և այլն), որոնց կարիքը համալսարանը շատ ուներ (տե՛ս համալսարանի գիտական բաժնի արձանագրությունները), մշակվեց և փորձարկվեց դասախոսների վերապատրաստման դասընթացների մոդելը, որը թույլ էր տալիս բարձրացնել դասախոսական կազմի որակը, համալսարանի դասախոսներից 474-ը վերջին 5 տարիների ընթացքում մասնագիտական կատարելագործում անցան արտասահմանում և այլն:

Ինչպես նշվեց ծրագրային ինքնավերլուծության զեկույցի այս չափանիշի նախորդ չափորոշիչում համալսարանը սահմանում է պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի տարբեր տարակարգերին ուղղված պահանջներ, ինչը ենթադրում է բազային կրթության և գիտական գործունեության ուղղվածության համապատասխանություն դասավանդվող առարկայական ծրագրին:

Արդեն խոսվել է նաև պրակտիկայի բաժնի կողմից անցկացվող «Դասախոսները ուսանողների աչքերով» հարցումների մասին, սակայն հարկ ենք համարում նշել, որ այդ հարցումների արդյունքները ՄԿԾ-ի մակարդակով վերլուծության չեն ենթարվել և այժմ դժվար է խոսել ՄԿԾ-ն ապահովող

պրոֆեսորադասախոսական անձնակազմի ուսումնական գործունեության արդյունավետության մասին:

**Լավագույն փորձի օրինակներ**

1. Դասախոս ուսանող հարաբերությունը բավական փոքր է
2. ՄԿԾ-ն սահմանում է պրոֆեսորադասախոսական անձնակազմի տարբեր տարակարգերին ուղղված պահանջներ, ինչը ենթադրում է բազային կրթության և գիտական գործունեության ուղղվածության համապատասխանություն դասավանդվող առարկայական ծրագրին:
3. Դասախոսական կազմի մրցույթային սկզբունքներով ընտրության ընթացակարգի առկայություն:
4. Առարկայական ծրագրերի մշտական վերանայում:

**Ոչ այնքան լավ փորձի օրինակներ**

1. Մասնագիտության կրթական ծրագիրը չի սահմանում պրոֆեսորա-դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ
2. ՄԿԾ-ն չի սահմանում դասախոսական անձնակազմի կայացմանը և մասնագիտական առաջընթացին ուղղված ընթացակարգ և ամբողջական քաղաքականություն:
3. Հաշվետու ժամանակաշրջանում չի կատարվել դասախոսական անձնակազմի ՄԿԾ-ի վերջնարդյունքների իրականացմանը նպաստող գործունեության արդյունավետության համապարփակ գնահատում:

# Չ Ա Փ Ա Ն Ի Շ 3

## Դասավանդումը եւ ուսումնառությունը

## ՄԿԾ-ի շրջանակում կիրառվող դասավանդման եւ ուսումնառության մեթոդներն ապահովում են ուսանողների մոտ ուսումնառության ակնկալվող արդյունքների ձեռքբերումը

**Հավակնությունները:** *Բարձրացնել ուսուցման որակը եւ կրթական ծրագրերի արդյունավետությունը՝ համապատասխանեցնելով Բոլոնիայի գործընթացին, գիտակցելով, որ այն համալսարանի մրցունակության եւ նրա շրջանավարտների մասնագիտական գործունեության հիմնական երաշխիքն է (տե՛ս ռազմավարական ծրագիրը, էջ 12-14):*

**Չափորոշիչ ա. ՄԿԾ-ի շրջանակում հստակ սահմանված են դասավանդման եւ ուսումնառության մոտեցումները, մեթոդները, որոնք անհրաժեշտ են ուսումնառության ակնկալվող արդյունքները ձեւավորելու համար:**

ԵՊԲՀ 2006-2010թթ. ռազմավարական ծրագրի շրջանակում կարևորվել են հետեւյալ երեք մոտեցումները.

ա) բարձրագույն կրթության որակի արժևորման եվրոպական ընկերության (ENQA) չափանիշների հիմքի վրա սահմանել ուսուցման (դասավանդման եւ ուսումնառության) որակի միասնական չափանիշներ համալսարանի բոլոր ամբիոններում՝ ըստ գործող ուսումնական ծրագրերի, միաժամանակ փոխհամաձայնացնելով իրարահաջորդ ծրագրերի պահանջները,

բ) կատարելագործել եւ վերանայել կրթական ծրագրերի նորացման գործընթացը, նպատակ ունենալով բարձրացնել ուսումնառության ելքային արդյունքների եւ ուսման գնահատման որակն ու ճշգրտությունը,

գ) համակողմանիորեն ուսումնասիրել գործատուների՝ համալսարանի շրջանավարտների մասնագիտական մակարդակի եւ կրթական ծրագրերի

արդյունավետության վերաբերյալ, ինչպես նաեւ ուսանողների ուսուցումից գոհունակության աստիճանը՝ ծրագրերի արդիականացման եւ շրջանավարտների ծառայունակության բարձրացման երաշխիքների հակադարձ կապ ստեղծելու նպատակով (տե՛ս ռազմավարական ծրագիրը, էջ12-14):

Որոշ չափով հստակեցվել են «Բուժական գործ» մասնագիտության, ինչպես նաև ակադեմիական ծրագրերի ուսումնառության վերջնարդյունքները «գիտելիք-կարողություն-հմտություն (ձեռնահասություն)» եռյակի շրջանակում, այն է՝ ուսանողն ինչ պետք է իմանա, հասկանա եւ կարողանա ցուցաբերել, համեմատության մեջ դնելով ակնկալվող արդյունքները ձեռք բերվածի հետ (տե՛ս, ՈԱՇ-ը): Պետական ավարտական ամփոփիչ, ինչպես նաև ընթացիկ քննություններն արտահայտում են ՈԱՇ-ի չափանիշներով հաստատված կրթական (ուսումնական) ծավալները:

Ներկայումս մշակվում է որակավորումների եւ ուսումնառության արդյունքների հետեւյալ քարտեզագրումը:

Որակավորումների շրջանակի եվրոպական մակարդակ
↓
ՈԱՇ ազգային մակարդակ
↓
Որակավորման պետական կրթական չափորոշիչ
↓
Կրթական ծրագիր (բուժական գործ մասնագիտություն) նախանշված կրթական վերջնարդյունքներ
↓
Դասընթացի/ մոդուլի մակարդակով նախանշված կրթական վերջնարդյունքներ
↓
Առաջադրանքի մակարդակով կրթական վերջնարդյունք

Նկարագրված են ՄԿԾ-ում կրթական ծրագրի ուսումնառության ակնկալվող արդյունքները եւ ցույց են տրված դասավանդման, ուսումնառության եւ ուսանողների գնահատման մեթոդների միջեւ համապատասխան կապերը (տե՛ս «Բուժական գործ» կրթական ծրագիրը):

Հարկ է նշել, որ հաշվետու ժամանակաշրջանում մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման եւ ուսումնառության կիրառվող մեթոդների քաղաքականության

մեջ դեռևս գերակշիռ է դասախոսակենտրոն մեթոդը: Ներկայումս քայլեր են արվում «Թյունինգ» մոդելին համապատասխան ուսանողակենտրոն դասավանդման ուղղությամբ (տե՛ս բժշկակենսաբանական ցիկլային մեթոդական հանձնաժողովի N4 նիստի արձանագրությունը, ուսանողական խորհրդարանի կազմակերպած «Բոլոնյան համակարգի ուսանողակենտրոն քաղաքականությունը» թեմայով համագումարի նյութերը):

Վերոբերյալ ուղղությունների ապահովման նպատակով մշակվել եւ գործողության մեջ են դրվել բակալավրիատի, մագիստրատուրայի «Բուժական գործ» մասնագիտության կրթական արդյունքների շրջանակը, որոնց համապատասխան քարտեզագրվել եւ խմբագրվել են առանձին առարկաների ուսումնական ծրագրերն ու պլանները, (տե՛ս համապատասխան փաստաթղթերը) առանձնացվել են ամեն առարկայի գծով դասավանդվող (դասախոսություն, սեմինար, լաբորատոր աշխատանք, պրակտիկ պարապմունք, մասնագիտական պրակտիկա) բաժինները եւ ուսանողի ինքնուրույն աշխատանքի թեմաները: Նկատենք սակայն, որ այս վերջինը ուսուցման պրոցեսում դեռեւս համեստ դիրք ունի, մինչդեռ ելքային արդյունքների վրա խարսխված («Թյունինգ» ծրագիր) ուսանողակենտրոն ուսուցումը հակառակ միտվածություն է պահանջում: Խնդիրն այն է, որ մեր ուսումնական ծրագրերում ինքնուրույն աշխատանքի թեմաները դեռևս փոքրաթիվ են, մինչդեռ եվրոպական ծրագրերում դրանք շատ ավելի մեծ ծավալ են կազմում: Մեր ուսումնական ռեսուրսները և միջոցները մեզ դեռ թույլ չեն տալիս մեծացնելու ինքնուրույնի ծավալները:

**Չափորոշիչ բ. ՄԿԾ-ն իրականացվում է՝ հաշվի առնելով միջազգային մակարդակում կիրառվող դասավանդման առաջավոր փորձը և մոտեցումները:**

Հաշվետու ժամանակաշրջանում ՄԿԾ-ի իրականացման գործընթացում դասավանդման առաջավոր փորձի և մոտեցումների ներդրման գործիքներից արդյունավետ են գործել մասնագիտական գրականության (դասագրքեր, ուսումնամեթոդական ձեռնարկներ, ցուցումներ) ստեղծումը, նորագույն տեխնիկական միջոցների ներդրումը: Վերջիններից առավել լայն կիրարկում են գտել (հիմնականում դասախոսությունների ընթացքում) էլեկտրոնային ppt-պրեզենտացիաները, անիմացիաները, տեսաժապավենների ցուցադրումը: Միջազգային մակարդակում կիրառվող դասավանդման մոդելի տեղայնացման մասնավոր օրինակներից ուշադրության արժանի և

հեռանկարային է Tempus ծրագրով իրականացված հեռավար և էլեկտրոնային ուսուցման վերապատրաստման դասընթացների մասնակիցների կողմից ԵՊԲՀ որոշ ամբիոններում նշված մեթոդի մասնակի ներդնումը (տե՛ս կայքերը www.community.livejournal.com/pathphys): Խնդրո առարկայի շրջանակում դրական փորձի օրինակներ են նաև վերջին տարիներին ՀՀ գործող մասնագիտական ասոցիացիաների համագործակցությունը միջազգային նույնատիպ կառույցների հետ և առարկայական ծրագրերում նրանց փորձի ընդգրկումը: Ավելին, համալսարանի որոշ փորձառու, ճանաչված դասախոսներ ընդգրկված են միջազգային ասոցիացիաների ուսումնակրթական հանձնաժողովներում և համատեղ ծրագրեր են մշակում այս կամ այն դասընթացի ուսուցման նորարարացման և կատարելագործման ուղղությամբ («Ախտաֆիզիոլոգիա, «Նյարդային դեգեներացիայի կենսաքիմիա», «Սրտաբանություն», «Ինվազիվ վիրաբուժություն» և այլն): Ներկայումս աշխատանքներ են տարվում կլինիկական առարկաների ուսուցման գործընթացում արձանագրային և պերսոնալիզացված բժշկության հիմունքների դասավանդման ուղղությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում համալսարանում դասավանդումը հիմնականում դասախոսակենտրոն էր՝ արտահայտելով դասավանդող անձնակազմի հետաքրքրություններն ու աշխատանքային փորձառությունը: Արդյունքում այս ամենը հանգեցնում է ծրագրերի տարանջատման, պահանջվող արդյունավետությամբ չի ապահովում դասընթացների իրարահաջորդայնությունը և ակնկալվող վերջնարդյունքների ձևավորումը: Դա պատճառներից մեկն է, որ ներկայումս համալսարանը քայլեր է ձեռնարկում անցնելու «Թյունինգ» մեթոդաբանությանը: Չնայած «Թյունինգ» նախագիծը լիովին ընդունում է աշխատակազմի կողմից փորձագիտական ներուժի առավելագույն կիրառման կարևորությունը, այնուամենայնիվ, այս տեսակը չպետք է գերակայի ծրագրում: Այս շրջանակներում հիմք է դրվում ուսանողակենտրոն ուսուցմանը, որպեսզի ուսումնառության ընթացքում ուսանողի ստացած հիմնական գիտելիքներն ու հմտությունները ևս ձևավորեն ուսումնական ծրագրի բովանդակությունը:

Հարկ է նշել, որ վերջին տարիներին համալսարանում դասավանդման հիմքում ընկած կրթական/առարկայական ծրագրերի արտոնման, հաստատման և վերանայման ընթացակարգերը լիովին համակարգված չեն եղել: Այսպես, միջազգային

մակարդակում կիրառվող դասավանդման առաջավոր փորձի և մոտեցումների ներդրման գործընթացը դեռևս սպորադիկ՝ մասնավոր նախաձեռնողական բնույթ է կրել: Պատճառն այն է, որ համալսարանում լիարժեք չեն գործարկվել բժշկական բարձրագույն կրթության որակի, մասնավորապես՝ դասավանդման միջազգային փորձի հետ համեմատելի փորձարկված մեխանիզմներ և ուսուցումը հիմնականում կազմակերպվել է ռուսական դպրոցի ավանդական մեթոդներով:

**Չափորոշիչ գ. Առկա են դասավանդման և ուսումնառության գործընթացների գնահատման և բարելավման մեխանիզմներ:**

Ուսումնական գործընթացի որակի բարելավման քաղաքականության առաջատար օղակը ուսումնամեթոդական վարչությունն է, ինչն ամրագրված է նրա կանոնակարգում (տե՛ս ուսումնամեթոդական վարչության կանոնակարգը, կետ 7): Այս նպատակով վարչությունը խրախուսում և իրականացնում է դասախոսական կազմի որակավորմանն ու կատարելագործմանն ուղղված տարաբնույթ քայլեր, ինչպես նաև կրթության որակի շարունակական կատարելագործման և մանկավարժական գործունեության կառավարման ու վերլուծության վերաբերյալ իրավական ակտերի մշակում և ներկայացում:

Դեկանատները ևս աշխատանքային պլաններում մշտապես նախատեսում են իրենց ենթակայության տակ գտնվող ամբիոններում դասալսումներ, որոնց ընթացքում նկատված թերությունները քննարկվում են ամբիոնի նիստում իսկ համակարգային լուծում պահանջող դիտողությունների վերաբերյալ զեկույց է ներկայացվում ուսումնական գծով պրոռեկտորին, խնդրահարույց հարցերը լուծվում են կոլեգիալ սկզբունքով՝ համապատասխան կառավարման և իրավական օղակների ընդգրկմամբ: Փոխադարձ դասալսումներ են կազմակերպվում նաև ամբիոններում, որոնց արդյունքները քննարկվում են ամբիոնի նիստերում:

ԵՊԲՀ-ում յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո ուսանողների շրջանում հարցում է անցկացվում կիսամյակի ընթացքում դասավանդված առարկաների գործնական պարապմունքների, կարդացված դասախոսությունների և դասընթացների վերաբերյալ (տե՛ս հարցաթերթիկները): Տվյալների վերլուծության արդյունքները ներկայացվում են համապատասխան ամբիոնի վարիչին: Վերջինս դրանք ներկայացնում է ամբիոնի նիստում, որի ընթացքում քննարկվում և վերլուծվում են ամբիոնի աշխատակիցների կողմից՝ գալով համապատասխան եզրակացություններ-

րի, անհրաժեշտության դեպքում ընդունվում են ցածր արդյունքների բարելավմանն ուղղված մոտեցումներ (տե՛ս ամբիոնների նիստերի արձանագրությունները): Սոցհարցման տվյալները ամբիոնի անձնակազմից բացի ներկայացվում են նաև համապատասխան դեկանատին և ուսումնական գծով պրոռեկտորին: Մի քանի կիսամյակ դիտվող ցածր արդյունքների բարելավման նպատակով կազմակերպում են քննարկումներ համապատասխան ֆակուլտետային խորհուրդներում և կայացվում են որոշումներ (տե՛ս նմանատիպ որոշման օրինակ):

Նշվածից բացի ԵՊԲՀ որակավորման բաժինը ևս, ոչ պարբերաբար, սակայն կրթական որակի բարելավման անհրաժեշտությունից ելնելով, ժամանակ առ ժամանակ, ուսանողության և պրոֆեսորադասախոսական անձնակազմի շրջանում անց է կացնում հարցումներ, որոնցում այլ հարցերի հետ մեկտեղ ընդգրկվում են դասավանդման և ուսումնառության գործընթացը գնահատող հարցադրումներ (տե՛ս հարցաթերթիկների օրինակները):

**Լավագույն փորձի օրինակներ**

1. ՄԿԾ-ի արդյունավետ իրագործման համար գործում են ենթակառուցվածքներ, որոնք միտված են ռացիոնալ, հասարակության պահանջներին համահունչ մասնագիտական ուսուցման ապահովմանը:
2. «Թյունինգ» մեթոդաբանության սկզբունքով տեղաշարժ է կատարվում դեպի ելքային ուսումնական արդյունքներ: Վերջինս իրագործվում է աստիճանական անցումով ավանդական/մուտքային մոտեցումներից դեպի հանրագումարային/ելքային մոտեցումը:
3. Առկա է որակավորումների ավելի մեծ ճշգրտություն և թափանցիկություն ապահովելու, սովորողներին հստակ տեղեկատվություն տրամադրելու, կրթությունը անհատական պահանջներին համապատասխանեցնելու, աշխատաշուկայի և զբաղվածության հետ կապը բարելավելու, համալսարանի միջազգային ճանաչմանը հասնելու միտվածություն:

**Ոչ այնքան լավ փորձի օրինակներ**

1. Մասնագիտական կրթական ծրագիրը բոլոր առարկաների գծով չէ, որ համադրելի է ՈԱՇ-ի հետ:
2. Կրթական ծրագրերում հստակեցված չեն ընդհանուր եւ հատուկ մասնագիտական կոմպետենցիաների ցանկը, մշակված չեն խմբում աշխատելու, գիտելիքներն ու հմտությունները շարունակաբար թարմացնելու ունակություն ձեռք բերելու հայեցակարգեր:
3. Դասավանդման նյութերը և ռեսուրսները թարմացման և նորացման կարիք ունեն:
4. Ուսումնառության ակնկալվող արդյունքների հաստատված քաղաքականությունը հստակեցված եւ նպատակամետ չէ, հաճախ չի հաշվառվում շահակիցների պահանջները:
5. Ցածր մակարդակի վրա է ծրագրերի գնահատման գործընթացում ուսանողների և մյուս շահակիցների մասնակցությունը:
6. Դեռևս չի կայացել հեռավար ուսուցման ինստիտուտը, ինչը բուհի մեծաքանակ ուսանողության և համարժեք ռեսուրսների պակասի առկայության պայմաններում հնարավորություն կստեղծի մի կողմից սովորողին մղելու ինքնուրույն ուսումնառության, մյուս կողմից կբեռնաթափի դասախոսի լսարանային մեծ ծանրաբեռնվածությունը:

# ՉԱՓԱՆԻՇ 4

## Ուսանողների գնահատումը

**ՄԿԾ-ն ունի ակադեմիական ազնվությանը նպաստող գնահատման համակարգ, ինչը թույլ է տալիս հավաստել ուսանողի առաջընթացը և ուսումնառության ակնկալվող արդյունքների ձևավորումը և ձեռքբերումը:**

**Հավակնությունները:** *Համալսարանը ձգտում է ՄԿԾ շրջանակում կատարելագործել ուսանողների ընթացիկ և ամփոփիչ որակավորման համակարգը՝ նպատակ ունենալով բարձրացնել ուսումնառության արդյունքների գնահատման որակն ու ճշգրտությունը, ապահովել գնահատման չափանիշների ու գործընթացների թափանցիկությունը և արդյունքների հրապարակայնությունը (տե՛ս ԵՊԲՀ 2006-2010թթ ռազմավարական ծրագիրը, էջ 13):*

**Չափորոշիչ ա. ՄԿԾ-ի շրջանակում կիրառվում է ուսումնառության ակնկալվող արդյունքների ձևավորումը գնահատող հստակ և հուսալի համակարգ, որի չափանիշները հասանելի են դասախոսներին և ուսանողներին:**

«Բուժական գործ» մասնագիտությամբ «Բժիշկ» որակավորմամբ կրթական ծրագրի շրջանակում ուսանողների գնահատման համակարգի հիմնական դրույթները ներառնված են վերոհիշյալ ՄԿԾ-ի պետական կրթական չափորոշչում, որտեղ մասնավորապես գրված է. «… ուսումնական պլանով նախատեսված բոլոր դասընթացների և պրակտիկայի համար պարտադիր է եզափակիչ գնահատականի նշանակումը(գիտելիքի գնահատումը)» (տե՛ս «Բուժական գործ» մասնագիտությամբ (060100) կրթական ծրագրի պետական կրթական չափորոշիչը, հաստատված ՀՀ ԿԳ նախարարի 2010 թվականի մարտի 4-ի N81-Ն հրամանով):

Ուսանողների գիտելիքների անկողմնակալ, թափանցիկ գնահատումը հիմնված է կիսամյակային և ավարտական քննությունների անցկացման կարգերի, ընթացակարգերի վրա (տե'ս Համալսարանի գիտական խորհրդի որոշումը, ԵՊԲՀ ռեկտորի հրամանները՝ 22.11.201, թիվ 53 Մ26.04.2011, Համակարգչային թեստային քննության ընթացակարգը 08.01.2013 թիվ 02-36/04): Այդ կարգերը մշակվում են

ցիկլային և կենտրոնական մեթոդական հանձնաժողովներում, հաստատվում են համալսարանի ռեկտորի կողմից, այնուհետև ներկայացվում են դասախոսներին և ուսանողներին: Ուսանողների գնահատման կարգը ներկայացված է 1-ին կուրսի ուսանողներին տրվող ուղեցույցներում (տե՛ս «Ուղեցույց առաջին կուրսեցու համար», էջ 16-17):

Վերոնշյալ կարգերում սահմանված գիտելիքների գնահատման մեխանիզմները և չափանիշները հիմնված են ուսումնառության վերջնարդյունքների վրա, որոնք ներկայացված են կրթական ծրագրով նախատեսված բոլոր առարկայական ծրագրերում (տե՛ս «Բուժական գործ» մասնագիտությամբ «Բժիշկ» որակավորմամբ կրթական ծրագրի նկարագիրը, առարկայական ուսումնական ծրագրերը): Յուրաքանչյուր առարկայական ծրագրում նշվում է, թե ինչ պետք է իմանա և կարողանա ուսանողը տվյալ թեմայի կամ առարկայի յուրացման արդյունքում: Իրենց հերթին՝ առարկայական ծրագրերը ստեղծվում են պետական կրթական չափորոշչի պահանջներին համապատասխան: Առարկայական ծրագրերի ստեղծման գործում անմիջական մասնակցություն են ունենում դասախոսները: Ուսանողների հետ ադմինիստրացիայի, դասախոսների պարբերաբար կազմակերպվող հանդիպումների ընթացքում ներկայացվում են գիտելիքների գնահատման համակարգում կատարված փոփոխությունները/բարեփոխումները/: «Բուժական գործ» մասնագիտությամբ կրթական ծրագրում շատ է կարևորվում նաև ուսումնական պրակտիկան որպես ուսումնառության վերջնարդյունքների ձևավորման կարևորագույն փուլ: Այդ պրակտիկայի ընթացքում առավել կարևորվում է ուսանողների գործնական հմտությունների ձեռքբերումը և ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքներն ընդգրկում են առավելապես գործնական հմտություններին վերաբերող հարցեր: Ուսումնական պրակտիկային մասնակցող ուսանողը նախապես ստանում է համապատասխան ուղեցույց, որտեղ նշվում են պրակտիկայի ընթացքում ուսումնառության ակնկալվող արդյունքները, որոնց ստուգման հիման վրա էլ ուսանողը գնահատվում է (տե՛ս «Պրակտիկայի հաշվետվության թերթիկը», կցվում է): Ուսումնառության վերջնարդյունքները (գործնական հմտություններ) գնահատվում են պրակտիկայի դասընթացի վերջում անցկացվող ստուգարքով: Այդ հարցերը ընդգրկված են նաև ամփոփիչ ատեստավորման 1-ին փուլի հարցաշարում (տե՛ս չափորոշիչ 3):

Ուսանողների գիտելիքների գնահատման ձևերը (քննություն կամ ստուգարք) ներառնված են պետական կրթական չափորոշչում, «Բուժական գործ» մասնագիտությամբ ՄԿԾ-ի նկարագրում՝ ուսումնական պլանում և առարկայական ծրագրերում: Բոլոր ստուգարքային և քննական առարկաներից անց են կացվում գրավոր թեստային հարցումներ (միջանկյալ քննություններ), որոնք գնահատվում են ըստ հստակ մշակված գնահատման կարգի: Հարցումների գնահատականների հիման վրա ձեւավորում է տարեկան (կամ կիսամյակային) գնահատականը: Քննությամբ ավարտվող դասընթացների դեպքում, գրավոր քննությանը ուսանողի կողմից դրական գնահատական ստանալու դեպքում, միջինացվում է տարեկանի (կամ կիսամյակայինի) հետ:

Ուսանողների գիտելիքների գնահատումը կատարվում է 10 բալանոց համակարգով՝ «գերազանց»՝ 10-9», «լավ»՝ 8-7, «բավարար»՝ 6-5, «անբավարար»՝ 4-1: Ստուգարքային և պրակտիկայի դասընթացների արդյունքում ձեռքբերված գիտելիքների և կարողությունների գնահատումն իրագործվում է ոչ տարբերակված եղանակով՝ «ստուգված» կամ «չստուգված» գնահատականի նշանակմամբ:

Քննությունների ժամանակ ուսանողների կողմից հաճախակի թուլ տրվող սխալները վերլուծվում և քննարկվում են ուսանողների հետ, սակայն այդ գործընթացը համակարգված չէ, որովհետև թեստային քննությունները գրավոր եղանակով անցկացնելու դեպքում դժվար է իրականացնել հաճախակի հանդիպող սխալների համակարգված վերլուծություն: 2011-2012 ուսումնական տարվանից սկսած թեստային քննությունները 1-ին և 2-րդ կուրսերում կատարվում են համակարգչային եղանակով, ինչը հնարավորություն է տալիս կատարել տիպային սխալների պատշաճ վիճակագրական վերլուծություն և իրականացնել ամբողջական կոորդինացիա:

**Չափորոշիչ բ. ՄԿԾ-ի շրջանակում առկա են որակավորումների շնորհման նպատակով ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների ձեռքբերումը հավաստող հստակ մեխանիզմներ:**

«Բուժական գործ» մասնագիտությամբ կրթական ծրագրի ավարտական փուլը շրջանավարտների ամփոփիչ ավարտական ատեստացիան է, որի բարեհաջող ելքի

դեպքում ատեստացիոն հանձնաժողովի կողմից շրջանավարտին շնորհվում է «Բժիշկ» որակավորումը:

Ուսանողների ավարտական ատեստացիան իրականացվում է ամփոփիչ ավարտական քննությունների հանձնաժողովի կողմից, համաձայն կառավարության կողմից հաստատված կարգի (տե՛ս ՀՀ Կրթության և գիտության նախարարի թիվ 1197 հրամանը 31.102011.) և համալսարանական կարգերի և դրույթների (տե՛ս ԵՊԲՀ «Բակալավրիատի և մագիստրատուրայի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կազմակերպման և անցկացման կարգը»): Ամփոփիչ ատեստացիան անց է կացվում 3 փուլերով՝ գործնական հմտությունների ատեստացիա, թեստային քննություններ (համակարգչային եղանակով) և բանավոր քննություն: Ատեստավորման հարցաշարերը կազմվում են պետական կրթական չափորոշիչների հիման վրա մշակված առարկայական ծրագրերին համապատասխան, այսինքն՝ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքներն ընդգրկված են այդ հարցաշարերում: Այդ հարցաշարերը քննարկվում և հաստատվում են Ընդհանուր բժշկության ֆակուլտետի գիտական խորհրդում (տե՛ս Ընդհանուր բժշկության ֆակուլտետի գիտական խորհրդի 16.05.2012թ., թիվ 5 արձանագրությունը): Ամփոփիչ ատեստացիայի բոլոր երեք փուլերն էլ վճռորոշ նշանակություն ունեն շրջանավարտին համապատասխան որակավորում շնորհելու գործընթացում: Առաջին երկու փուլերից յուրաքանչյուրում անբավարար ստացած ուսանողին չի թույլատրվում մասնակցել վերջին փուլին: Վերջնական գնահատականը ձևավորվում է թեստային և բանավոր քննությունների գնահատականների միջինացմամբ: Ամփոփիչ ատեստավորման կարգի համաձայն (տե՛ս կարգը), քննությամբ որոշվում է շրջանավարտի ձեռք բերած գիտելիքի, կարողությունների և կոմպետենցիաների համապատասխանությունը ՀՀ ՈԱՇ-ին և պետական կրթական չափորոշիչին: Այսպիսով՝ «Բուժական գործ» մասնագիտությամբ «Բժիշկ» որակավորմամբ կրթական ծրագրի շրջանակում որակավորումների շնորհումը կատարվում է հստակ մեխանիզմով, որը հավաստում է շրջանավարտի կողմից ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների ձեռքբերումը:

Որպես թերություն կարելի է նշել այն փաստը, որ վերոնշյալ մեխանիզմը հստակ գործում է հիմնականում ավարտական ատեստավորման ժամանակ և ավելի քիչ է կիրառվում կիսամակային քննությունների ժամանակ, երբ գիտելիքների ստուգումը

հիմնականում իրականացվում է թեստային հարցման եղանակով և ուսումնառության վերջնարդյունքների գնահատման այնպիսի կարևոր բաղադրյալ, ինչպիսին է գործնական հմտությունների ստուգումը, հաճախ որոշիչ դեր չի կատարում:

**Չափորոշիչ *գ.* ՄԿԾ-ի շրջանակում առկա ենգնահատման համակարգի բարելավման հստակ մեխանիզմներ**

«Բուժական գործ» մասնագիտությամբ բակալավրական եւ մագիստրոսական ՄԿԾ-ների շրջանակներում կիրառվող գնահատման համակարգը, ըստ էության, մեթոդապես չի տարբերվում ԵՊԲՀ-ում գործող այլ ՄԿԾ-երում կիրառվող գնահատման համակարգերից, ինչը պայմանավորված է համալսարանում պատմականորեն ձեւավորված վարչարարական ավանդույթներով (բացառությամբ նոր մեկնարկած «Հանրային առողջություն» մագիստրոսական կրթական ծրագրի, որի ամփոփիչ ավարտական ատեստացիան ներառում է մագիստրոսական թեզի պաշտպանություն (տե՛ս Ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնավերլուծության զեկույցի 3-րդ չափանիշը):

2012 թ-ից ԵՊԲՀ Որակի գնահատման եւ ապահովման կենտրոնի կողմից ներքին շահակիցների շրջանում պարբերաբար անցկացվող հարցախույզների շնորհիվ հնարավորություն է ընձեռվում ավելի արդյունավետ կերպով իրականացնել գնահատման համակարգի բարելավման գործընթացը (տե՛ս ուսանողների եւ դասախոսների շրջանում կատարված հարցախույզի արդյունքները):

Պետական կրթական չափորոշչի «կարծր» կաղապարային շրջանակում նույնիսկ համալսարանը հաջողել է ներքին շահակիցների կարծիքների հաշվառմամբ (հարցախույզներ ներքին շահակիցների շրջանում՝ ամբիոնների նիստերի արձանագրություններ, Ընդհանուր բժշկության ֆակուլտետի խորհրդի նիստեր, ցիկլային մեթոդական հանձնաժողովների նիստեր, կենտրոնական մեթոդական հանձնաժողովի նիստեր, ռեկտորատ, գիտական խորհրդի նիստեր) հնարավորինս ճկունություն ապահովել: Գնահատման համակարգի բարելավումը բուհի հիշյալ կառույցների մշտական ուշադրության կենտրոնում է: ԵՊԲՀ-ի կանոնադրությամբ սահմանված կառավարման միանձնյա եւ կոլեկտիվ եղանակների հնարավորինս ներդաշնակ համադրությամբ հաջողվեց զգալի բարելավել գիտելիքների եւ

կարողությունների գնահատման համակարգը. մասնավորապես, գիտական խորհրդի որոշմամբ, 2012-2013 ուստարվանից ՄԿԾ-ի 1-ին կուրսի շրջանակներում գրավոր (թղթային) թեստային քննությունը փոխարինվեց համակարգչայինով՝ թափանցիկության եւ անաչառության ավելացման նպատակով:

Այս եւ բոլոր մնացած ՄԿԾ-երի շրջանակներում թեստային քննությունների համատարած ներդնումը բուհն իրագործել է 2006-ից, մինչեւ համապատասխան պետական կրթական չափորոշչի ընդունումը (2010): Այս հանգամանքը պայմանավորված էր ՀՀ բարձրագույն եւ հետբուհական կրթության մասի նոր օրենքի ընդունմամբ, ըստ որի, ՀՀ պետության կողմից ուսման վարձի փոխհատուցման համար մրցույթն անցկացվում է ոչ միայն բուհ ընդունելության քննությունների արդյունքում, այլ նաև ուսումնական տարվա քննությունների եւ ստուգարքների արդյունքների հիման վրա՝ մրցութային կարգով (շրջափոխում՝ ռոտացիա): Նման պայմաններում ուսանողների միջեւ մրցակցությունն էլ ավելի է սրվում, ուստի զգացվեց ուսանողների համար հնարավորինս հասկանալի, պարզ, արդար, թափանցիկ համակարգի ստեղծման եւ կիրառման անհրաժեշտությունը: Վերջին հինգ տարվա շրջափոխման տվյալների վերլուծությունը ցույց տվեց, որ համակարգն իսկապես արդարացի է. սահմանային մրցութային տվյալներով ուսանողների թիվը մեծ չէ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Բուժական գործ» մասնագիտությամբ (060100) «Բժշկության մագիստրոս» որակավորմամբ բարձրագույն մասնագիտական կրթության մագիստրոսի որակավորման պետական կրթական չափորոշիչը դեռ հաստատված չի, հիմք ընդունելով ներքին շահակիցների շրջանում անցկացված հարցախույզները, ԵՊԲՀ գիտական խորհրդի կողմից որոշում ընդունվեց, մագիստրոսական ծրագրի 1-ին տարվա ավարտին մասնագիտական առարկաներից քննություններն անցկացնել նաև բանավոր եղանակով (պահպանելով թեստային հարցումների բաղադրիչը): Այս որոշման համար հիմք հանդիսացան ներքին (ուսանողներ, դասախոսներ, ադմինիստրացիա) եւ արտաքին (ամփոփիչ ավարտական քննական հանձնաժողովների նախագահներ) շահակիցների այն տրամաբանական մտահոգությունը, որ հանձնաժողովի առջեւ ուսանողի համար «անսովոր» բանավոր քննության պարագայում գիտելիքի գնահատման գործընթացը ոչ բավարար վավեր է դարձնում: Մոտ ապագայում՝ 2013 եւ 2014 տարիների

ամփոփիչ ավարտական քննության արդյունքների համեմատական վերլուծությունը թույլ կտա գիտելիքի գնահատման համակարգի բարելավմանն ուղղված ավելի կտրուկ քայլեր կատարել:

Ամփոփելով վերոնշյալը՝ կարող ենք փաստել, որ ՄԿԾ-ի շրջանակում առկա են գնահատման համակարգի բարելավման հստակ մեխանիզմներ՝ բուհի եւ ՄԿԾ-ն իրականացնող ֆակուլտետի իրավասության սահմաններում, սակայն այդ մեխանիզմների նկարագրությունը դեռ ներբուհական ոչ մի իրավական ակտում նկարագրված չէ:

**Չափորոշիչ դ. ՄԿԾ-ի շրջանակում հավասար կանաչառ մոտեցում է ցուցաբերվում ուսանողներին հստակ սահմանածքաղաքականության և ընթացակարգերի միջոցով՝ հաշվի առնելով նրանց պարտականությունները և բողոքները:**

ՄԿԾ-ի շրջանակներում ուսանողներին ցուցաբերվում է հավասար եւ անաչառ մոտեցում, ՀՀ օրենսդրության, բուհի կողմից հստակ սահմանած քաղաքականության եւ ընթացակարգերի միջոցով (տե՛ս ներքին կարգապահական կանոնակարգ, ռեկտորի եւ պրոռեկտորի շրջաբերականներ, ընթացակարգեր): Վերոբերյալ փաստաթղթերում մանրամասնորեն ներկայացված է նաեւ բողոքարկման գործընթացը: Ի հաստատումն ուսանողների բողոքների հիմնավոր հաշվառման եւ բողոքարկման գործընթացի արդարացի եւ թափանցիկ անցկացման, կարելի է նաեւ մատնանշել այն փաստը, որ 2006-2012 թվականներին արտահամալսարանական ատյաններին ուղղված եւ ոչ մի բողոք կամ հայց ուսանողների կամ նրանց ներկայացուցիչների կողմից հակառակի կապակցությամբ չեն եղել: Բողոքարկման գործընթացին ակտիվորեն մասնակցում են ուսանողական ակտիվի ներկայացուցիչները: Ներքին շահակիցների շրջանում ակտիվորեն քննարկվել է ապագա 2012-2013 ուստարվա ամառային քննաշրջանում անցկացվելիք մագիստրատուրայի 1-ին կուրսի մասնագիտական առարկաների քննական առարկաների բանավոր քննությունների բողոքարկման գործընթացի հետ կապված մտահոգությունը՝ այս պահին ռեկտորի հաստատման է պատրաստվում համապատասխան ընթացակարգը՝ հիմք ընդունելով մագիստրոսական ՄԿԾ-ի ամփոփիչ ավարտական ատեստավորման ընթացակարգը եւ այլ մագիստրոսական

ՄԿԾ-ների փորձը (օտարերկրացիների համար նախատեսված «Բուժական գործ» դիպլոմավորված մասնագետի որակավորման շնորհմամբ ՄԿԾ-ն, «Ստոմատոլոգիա», «Դեղագիտություն» մագիստրոսական ՄԿԾ-ներ):

**Չափորոշիչ ե. Համալսարանը վարում է ակադեմիական ազնվությանը նպաստող և գրագողության դեմ պայքարող հստակ քաղաքականություն:**

Համալսարանը վարում է հստակ քաղաքականություն, որը նպաստում է ակադեմիական ազնվության ապահովմանը և քննարկվող ՄԿԾ-ի և համալսարանի մյուս ՄԿԾ-ների շրջանակներում: Դա հիմնականում իրականացվում է ուսանողների գնահատման հստակ մեխանիզմների, քննական գործընթացների թափանցիկության և խիստ հսկողության պայմաններում:

Քննությունները հիմնականում կատարվում են գրավոր թեստային եղանակով: 1-ին կուրսից սկսված արդեն ներդրվել է գնահատման թեստային համակարգչային եղանակը, (տե՛ս ԵՊԲՀ ռեկտորի հրաման թիվ 53 Մ26.04.2011), որը խիստ նվազեցնում է մարդկային/սուբյեկտիվ/ գործոնի դերը քննական գործընթացում:

Քննական գործընթացի հսկումն ու մշտադիտարկումն իրականացվում են ադմինիստրացիայի և դասախոսների միջոցով ինչպես քննական լսարաններում, այնպես էլ նաև հեռահար եղանակով՝ տեսախցիկների համակարգի միջոցով: Անհրաժեշտության դեպքում իրականացվում է նաև քննությունների արդյունքների բողոքարկում՝ ուսանողների և նրանց շահերի պաշտպանի՝ ուսանողական խորհրդարանի ներկայացուցչի մասնակցությամբ:

Բանավոր քննություններն իրականացվում են քննական հանձնաժողովի կողմից: Ուսանողները, ցանկության դեպքում, նույնպես կարող են հետևել քննության ընթացքին: Քննության ամբողջ գործընթացը տեսաձայնագրվում է բողոքարկումների ժամանակ հնարավոր սխալներից խուսափելու նպատակով:

Ամփոփիչ ավարտական քննությունների հանձնաժողովում ընդգրկվում են ինչպես համալսարանի աշխատակիցները, այնպես էլ համալսարանում չաշխատող ՀՀ առաջատար մասնագետները: Ամփոփիչ ավարտական քննությունների հանձնաժողովի նախագահը նունպես համալսարանի աշխատակից չէ:

Ինքնավերլուծությունն ընդգրկող ժամանակահատվածում գրագողության դեմ պայքարը Համալսարանի քաղաքականության առաջնահերթություններից չէ, որովհետև «Բուժական գործ» մասնագիտությամբ կրթական ծրագրի շրջանակում ուսանողների գիտելիքների գնահատման և ոչ մի փուլում որպես գիտելիքների ստուգման ձև չի կիրառվում թեզի պաշպանությունը կամ գրավոր քննության այլ եղանակ, բացի թեստայինից:

**Լավագույն փորձի օրինակներ**

1. Համալսարանում գործում է ուսումնառության ակնկալվող արդյունքների ձևավորումը գնահատող հստակ համակարգ, որը հասանելի է դասախոսներին և ուսանողներին:
2. Հաշվետու ժամանակահատվածում ՄԿԾ-ն իրականացնող ֆակուլտետը եւ բուհը, առաջնահերթություն տալով 2006 թվականից ՀՀ-ում օրենսդրությամբ ընդունված ռոտացիայի (շրջափոխման) համակարգի ներդրման արդյունքում հանրության կողմից պահանջված թափանցիկության, անաչառության եւ արդարության գործոններին, ակտիվորեն զարգացրել է գիտելիքների գնահատման թեստային համակարգը:
3. Որակավորումների շնորհման նպատակով կազմակերպվող ամփոփիչ ավարտական աըտեստացիայի միջոցով ուսանողների գիտելիքների գնահատումն իրականացվում է հստակ մեխանիզմով, որը հնարավորություն է տալիս ապահովելու ուսումնառության արդյունքների գնահատման որակն ու ճշգրտությունը, ինչպես նաև գնահատման չափանիշների ու գործընթացների թափանցիկությունը:

**Ոչ այնքան լավ փորձի օրինակներ**

1. Քննությունների ընթացքում ուսանողների կողմից հաճախակի թույլտրվող սխալների վերլուծության և ուսանողների հետ քննարկման գործընթացը համակարգված չէ:
2. Ընթացիկ/կիսամյակային/ քննությունների ժամանակ ուսանողների գիտելիքները հիմնականում գնահատվում են թեստային հարցումների

հիման վրա և գործնական ունակությունների գնահատումը կատարվում է միայն ուսումնական պրակտիկայի վերջում և ամփոփիչ ավարտական ատեստացիայի ժամանակ:

3. Բացակայում է բարելավման հստակ մեխանիզմների նկարագրությունը, թեև բարելավումն իրականացվում է՝ բուհի եւ ՄԿԾ-ն իրականացնող ֆակուլտերի իրավասության սահմաններում:

## ՉԱՓԱՆԻՇ 5

## Հետազոտական եվ ստեղծագործական գործունեությունը

**ՄԿԾ-ի շրջանակում ապահովվում է կապը հետազոտական ու ստեղծագործական գործունեության և ուսումնառության միջև**

**Հավակնությունները:** *Համալսարանը ձգտում է «Բուժական գործ» մասնագիտությամբ «Բժիշկ» որակավորմամբ կրթական ծրագրի շրջանակում ստեղծել պայմաններ դասախոսների և ուսանողների կողմից հետազոտական աշխատանքների իրականացման համար և բարձրացնել գիտական ներուժի օգտագործման արդյունավետությունը, ինչպես նաև ընդլայնելով ուսանողների ներգրավվածությունը հետազոտական աշխատանքներին, բարձրացնել նրանց ուսումնառության արդյունավետությունը և ապահովել համալսարանի դասախոսական կազմի համալրման կայունությունը (տե՛ս Համալսարանի 2006-2010թթ ռազմավարական ծրագիրը):*

**Չափորոշիչ ա. ՄԿԾ-ի շրջանակում առկա են երկարաժամկետ ռազմավարություն, միջնաժամկետ և կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտական ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները:**

«Բուժական գործ» մասնագիտությամբ «Բժիշկ» որակավորմամբ կրթական ծրագրի շրջանակում իրականացվում են գործառույթներ, որոնք նպաստում են դասախոսների և ասպիրանտների հետազոտական և ստեղծագործական նախաձեռնությունների ծավալմանն ու իրականացմանը: Հետազոտական ոլորտում ՄԿԾ-ի շրջանակում առկա երկարաժամկետ ռազմավարությունը, միջնաժամկետ և կարճաժամկետ ծրագրերը հաճախ ներառնված են համալսարանի ռազմավարության մեջ, որովհետև համալսարանի բոլոր ՄԿԾ-երի հետազոտական գործնեության համակարգումն իրականացվում է հիմնականում ինստիտուցիոնալ մակարդակով, կենտրոնացված, համալսարանի գիտակազմակերպչական գործունեությունը կառավարող 3 հիմնական օղակների՝ գիտակոորդինացիոն խորհրդի, գիտակազմա-կերպչական մասի և գիտահետազոտական կենտրոնի համակցված գործունեության միջոցով (տե՛ս ինստիտուցիոնալ ինքնավերլուծություն, Չափանիշ 6):

ՄԿԾ-ում ընդգրկված ամբիոնների աշխատակիցները, դասախոսական անձնակազմը լայնորեն ներգրավված են 2006-2011 թվականներին համալսարանի

գիտական գործունեության հինգ հիմնական ուղղություններից չորսում: Ավելին՝ ՄԿԾ-ի ամբիոններն են իրականացնում այդ գերակա ուղությունների գիտա-հետազոտական ծրագրերի մեծ մասը: Այդ հետազոտական աշխատանքներն իրականացնող ՄԿԾ-ի ամբիոնների և համալսարանական կլինիկաների համար սահմանվում են գիտական թեմաների միջնաժամկետ ծրագրեր՝ երեք տարի ժամանակով, որոնք էլ պայմանավորում են ՄԿԾ-ի երկարաժամկետ ռազմավարությունը: ՄԿԾ-ում ընդգրկված ամբիոններն իրենց աշխատանքային պլաններում ներկայացնում են նաև գալիք տարում նախատեսվող գիտական աշխատանքների թեմաները, իրականացման պատասխանատուներին, իսկ հաջորդ տարի ներկայացվող հաշվետվություններում գրում են պլանավորված աշխատանքների կատարողականի մասին: Հիշյալ աշխատանքային պլանները և հաշվետվությունները ներկայացվում են ինչպես համալսարանի գիտակազմակերպչական գործունեությունն իրականացնող կառույցներին, այնպես էլ դեկանատ, որն էլ տարին մեկ անգամ իրականացնում է ամբիոնների աշխատանքային պլանների և հաշվետվությունների վերլուծություն, այդ թվում և հետազոտական աշխատանքների վերաբերյալ: Վերլուծության արդյունքների վերաբերյալ տարին մեկ անգամ դեկանը հաշվետվություն է ներկայացնում ֆակուլտետային խորհրդին:

**Չափորոշիչ բ. ՄԿԾ-ն հստակ քաղաքականության ու ընթացակարգերի միջոցով նպաստում է հետազոտությունների զարգացմանն ու նորարարություններին:**

ՄԿԾ-ի շրջանակում հետազոտությունների զարգացմանն ուղղված քաղաքականությունն իրականացվում է ինչպես համահամալսարանական գիտակազմակերպչական կառույցների, այնպես էլ ՄԿԾ-ում ընդգրկված ամբիոնների, դեկանատի և ֆակուլտետային խորհրդի միջոցով:

Ամբիոնների կարևորագույն պարտականություններից է գիտահետազոտական աշխատանքների իրականացումը, կատարված աշխատանքների արդյունքների հրապարակումը և ներդրումը գործնական բժշկության մեջ (տե՛ս «ԵՊԲՀ Ամբիոնի կանոնակարգը»): Նույն կանոնադրությամբ ամբիոնները պարտավոր են մասնակցելու Համալսարանի գիտական ծրագրերին: Ամբիոններում քննարկվում են

աշխատակիցների ոչ միայն ուսումնամեթոդական, այլև գիտահետազոտական աշխատանքները, որոնք նույնպես պլանավորվում են:

Ֆակուլտետային խորհուրդը և դեկանատը, որոնք կոորդինացնում են ՄԿԾ-ի շրջանակում իրականացվող ուսումնամեթոդական գործունեությունը, ֆակուլտետի կանոնակարգի համաձայն, պարտավոր են լուծել նաև գիտահետազոտական գործունեության հետ առընչվող հարցեր (տե՛ս «ԵՊԲՀ Ֆակուլտետի կանոնակարգը»): Դեկանը, ֆակուլտետային խորհրդի հաստատված աշխատանքային պլանի համաձայն, տարին մեկ անգամ ներկայացնում է ամբիոնների աշխատանքային պլանների և հաշվետվությունների վերլուծությունը, որտեղ և ներկայացվում են նաև ամբիոնների գիտահետազոտական գործունեության հետ կապված հարցեր: Սակայն ֆակուլտետային խորհրդի և դեկանատի դերը ՄԿԾ-ի շրջանակում իրականացվող գիտական հետազոտությունների զարգացմանն ուղղված քաղաքականության մեջ բավական սահմանափակ է:

**Չափորոշիչ գ. ՄԿԾ-ի շրջանակում կարևորվում է հետազոտական գործունեության միջազգայնացումը:**

ՄԿԾ-ի շրջանակում իրականացված գիտահետազոտական աշխատանքների արդյունքների վերաբերյալ համալսարանի աշխատակիցները և ուսանողները զեկուցումներով հանդես են գալիս արտերկրներում, տպագրում են գիտական հոդվածներ՝ արտասահմանյան բարձր վարկանիշ ունեցող գիտական ամսագրերում: Համալսարանը հնարավորինս (ֆինանսապես) աջակցում է աշխատակիցների արտասահմանյան գործուղումներին (գիտական կոնֆերանսներին), իրականացնում է փոխանակային ծրագրեր, կազմակերպում է միջազգային գիտաժողովներ, հրավիրում է բժշկության բնագավառի արտերկրի առաջատար մասնագետների, դասախոսների, գիտնականների, որոնք զեկուցումներով հանդես են գալիս համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ուսանողների համար (տե՛ս գիտական գծով պրոռեկտորի և ռեկտորի հաշվետվությունները):

Համալսարանի գիտական, գիտատեղեկատվական հանդեսների («The New Armenian Medical Journal», «Բժշկություն, գիտություն և կրթություն») բոլոր համարները պարտադիր կերպով ուղարկվում են մի շարք երկրների

գրադարաններին: «The New Armenian Medical Journal»- խմբագրական խորհրդի կազմում են գիտնականներ մի շարք արտասահմանյան երկրներից՝ Հունաստան, ԱՄՆ, ՌԴ, Իտալիա, Վրաստան: Այդ ամսագրի գիտական հոդվածները հղվում են Scopius-ի և Viniti-ի տվյալների շտեմարան, որտեղ վերջին տարիներին / 2009-2011/ դիտվում է ցիտման ցուցանիշի աճ: Դիտվում է նաև միջազգային համագործակցության ցուցանիշի աճ, այլ երկրների գիտնականների հետ համատեղ հոդվածների տպագրման առումով (տե՛ս ամսագրի խմբագրի հաշվետվությունը, ամսագրի վեբ կայքը):

**Չափորոշիչ դ. ՄԿԾ-ի շրջանակում առկա են հետազոտական ու ստեղծագործական գործունեությունը և ուսումնական գործընթացը փոխկապակցելու և բարելավելու հստակ մեխանիզմներ:**

Ինչպես ԵՊԲՀ-ի բոլոր ՄԿԾ-ների, այնպես էլ «Բուժական գործ» մասնագիտությամբ «Բժիշկ» որակավորմամբ կրթական ծրագրի շրջանակում գործում են հստակ մեխանիզմներ, որոնք ապահովում են հետազոտական գործնեության և ուսումնական գործընթացի փոխադարձ կապը: Այդ կապն ապահովվում է ուսումնառության բոլոր տարիներին, սակայն այն հատկապես կարևորվում է բարձր՝ 4-6-րդ կուրսերում, համալսարանական կլինիկաներում մասնագիտական առարկաների ուսումնասիրության ժամանակ: Այդ ժամանակ է ձևավորվում ապագա բժիշկը, որը չի կարող լինել միայն պասիվ գիտելիքների կրող, այլ պետք է տիրապետի ակտիվ հետազոտման մեթոդների, որպեսզի իր աշխատանքային գործունեության ընթացքում կարողանա ինքնուրույն, գիտականորեն հիմնավորված որոշումներ ընդունել, կարողանա օգտվել մասնագիտական, գիտական գրականությունից և կիրառի հետազոտման ժամանակակից մեթոդներ: Ապագա բժշկի ուսումնառության առանձնահատկու-թյուններից է նաև այն, որ կլինիկաներում ընթացող դասընթացների ժամանակ արդեն ուսանողը այս կամ այն չափով իրականացնում է հետազոտական գործունեություն՝ շփվելով հիվանդների հետ և լրացնելով կոնկրետ հիվանդի հիվանդության պատմությունը:

Ապագա բժիշկների ընդգրկումն ամբիոնների հետազոտական աշխատանք-ներում նրանց մոտ զարգացնում է մտածողության և գործնական խնդիրների լուծման համար անհրաժեշտ ճկունություն, արտակարգ իրավիճակներում արագ կողմնորոշվելու, ոչ ստանդարտ լուծումներ գտնելու ունակություն: Ուսանողներն իրականացնում են ինչպես ուսումնահետազոտական, այնպես էլ գիտահետազոտական աշխատանքներ: Ուսումնահետազոտական աշխատանքներ իրականացնում են գրեթե բոլոր ուսանողները և դրանք ուսումնական գործընթացի բաղկացուցիչ մաս են: Ավելի հաճախ դրանք տեսական բնույթի հետազոտություններ են, սովորաբար ամփոփվում են ռեֆերատիվ զեկուցումներով և շատ են կարևորվում, քանի որ այս փուլում արդեն ուսանողը պասիվ ընկալողից վերածվում է ակտիվ հետազոտողի: Հետազոտության այս եղանակը ճանաչողական առումով հետազոտական է, սակայն ֆունկցիոնալ նշանակությամբ՝ ուսուցողական, այսինքն՝ օբյեկտիվ գիտական արդյունքների ստացումը ոչ միշտ է իրատեսական:

Ի տարբերություն ուսումնահետազոտական աշխատանքների, գիտա-հետազոտական աշխատանքներում ընդգրվում են ավելի փոքրաթիվ ուսանողներ՝ լավագույնները, որոնց աշխատանքները համակարգվում են ամբիոնների գիտական խմբակներում: Այդ ուսանողների գիտա-հետազոտական աշխատանքների բնույթը պայմանավորված է ամբիոնների գիտական թեմատիկայով: Ամբիոններում ուսանողների ընգրկմամբ իրականացվող գիտա-հետազոտական աշխատանքները կարող են ուղղված լինել ինչպես գիտա-հետազոտական աշխատանքի տարրերին ուսանողների ուսուցմանը, այնպես էլ բուն հետազոտական աշխատանքներին՝ ուսանողների մասնակցությունները հմուտ գիտաշխատողի կամ դասախոսի ղեկավարությամբ: Ուսանողների գիտահետազտական աշխատանքներն ամփոփվում են գիտական հոդվածներում և զեկուցումներում: Ուսանողները գիտական զեկուցումներով հանդես են գալիս և՛ Հայաստանում և՛ արտերկրներում: Ամբիոններում այսպիսի գիտական խմբակնեքի գործունությունը հնարավորություն-ներ է ընձեԼնում ընտրելու այն լավագույն ուսանողներին, որոնք կարող են հՅտագ=յում համալրել համալսարանի դասախոսական կազմը: Ամբիոներիւմ ուսանողներին գիտական աՎխատՈանքՖերում ներգրավվելը ամբիոնների իրաՎասությունը և պարտականությունն էԿտե՛ս «ԵՊԲՀ Ամբիոնի կաՎոնակարգը»):

Որպես թերություն կարելի է նշել այն փաստը, որ գիտական աշխատանքների համար հատկացվող սահմանափակ նեութական ռեսուրսները հաճախ դժվարություններ են ստեղծում ուսանողական գիտական խմբակների գործունեության համար:

Ուսանողների մասնակցությամբ իրականացվող ուսումնա- հետազոտական և գիտահետազոտական աշխատանքները նախապես պլանավորվում են, այսինքն հանդիսանում են ամբիոնների աշխատանքային պլանի բաղկացուցիչ մաս, որն ուսումնական տարվա սկզբում ներկայացվում է դեկանատ: Մեկ տարի հետո կատարված աշխատանքների մասին ներկայացվում է հաշվետվություն: Ուսանողական գիտական խմբակների առկայությունը ամբիոնների աշխատանքային գործունեության կարևորագույն ցուցանիշներից է:

Համալսարանի գիտահետազոտական լաբորատորիաների աշխատակիցները նույնպես ընդգրկված են դասավանդման գործընթացում: Մասնավորապես՝ մագիստրատուրայի ուսանողներին ներկայացնում են այնպիսի թեմաներ, որոնք սերտորեն առնչվում են իրենց կողմից անցկացվող գիտական ծրագրի շրջանակներում կատարվող ուսումնասիրություններին:

Համալսարանի դասախոսներն իրենց և գործընկերների կողմից իրականացվող գիտական հետազոտությունների արդյունքների մասին դասախոսությունների և գործնական պարապմունքների ժամանակ հաճախ տեղյակ են պահում ուսանողերին, որն օգնում է վերջիններիս պատկերացում կազմելու տվյալ բնագավառում գիտության վերջին նվաճումների և զարգացման հեռանկարների մասին: Մասնավորապես կլինիկական ամբիոններում ներդրվող բուժական և ախտորոշիչ նպատակներով կիրառվող նոր տեխնոլոգիաների կիրառման վերաբերյալ հետազոտությունները մեծ ուսուցողական նշանակություն ունեցան ուսանողների համար:

**Լավագույն փորձի օրինակներ**

1. Հետազոտական ոլորտում ՄԿԾ-ի շրջանակում առկա երկարաժամկետ ռազմավարությունը, միջնաժամկետ և կարճաժամկետ ծրագրերը ներառնված են համալսարանի ռազմավարական ծրագրում:
2. Առկա է հստակ քաղաքականություն՝ խրախուսել համալսարանի երիտասարդ դասախոսների հետազոտական գործունեությունը:
3. Բարձր կուրսերի ուսանողներն ընդգրկվում են կլինիկաներում իրականավող հետազոտություններում:

**Ոչ այնքան լավ փորձի օրինակներ**

1. Ֆակուլտետային խորհրդի և դեկանատի դերը ՄԿԾ-ի շրջանակում իրականացվող գիտական հետազոտությունների զարգացմանն ուղղված քաղաքականության մեջ բավական սահմանափակ է:
2. Գիտական աշխատանքների համար հատկացվող սահմանափակ նյութական ռեսուրսները հաճախ դժվարություններ են ստեղծում ուսանողական գիտական խմբակների գործունեության համար:
3. Համալսարանում գործող գիտելիքների գնահատման կրեդիտային համակարգում որևէ մեխանիզմ չի գործում, որը կարող է խրախուսել ուսանողների մասնակցությունը գիտական խմբակների աշխատանքներին:

## ՀԱՎԱՆԻՇ 6

## Կրթական միջավայր

**ՄԿԾ-ն նպաստում է որակյալ կրթության իրականացմանը՝ ձևավորելով ուսումնառության համար բարենպաստ միջավայր:**

**Հավակնությունները:** *«Բուժական գործ» մասնագիտական կրթական ծրագրի բովանդակության նորացմանը և ուսուցման մեթոդների արդիականացմանը միտված համալսարանի նյութատեխնիկական բազայի բարելավում՝ ըստ ուսուցման և հետազոտական ոլորտներում որակի ապահովման պահանջների:*

**Չափորոշիչ ա. ՄԿԾ-ի իրականացման համար առկա են անհրաժեշտ ռեսուրսներ, որոնք նպաստում են սահմանված առաքելության եւ նպատակների արդյունավետ իրականացմանն ու ուսումնական միջավայրի ստեղծմանը:**

Հաշվետու ժամանակաշրջանում ԵՊԲՀ ռազմավարական ծրագրի առաջնահերթությունների մեջ ընդգծվել, շեշտավորվել է համալսարանի նյութատեխնիկական բազայի բարելավման հիմնահարցը ընդհանրապես, եւ «Բուժական գործ» մասնագիտության գծով՝ մասնավորապես: Նշյալ համատեքստում հատկապես կարեւորվել է համալսարանում չորս կրթահամալիրի՝ «Կենտրոն», «Մուրացան», «Դավիթաշեն», «Արաբկիր» կլինիկաների վերակառուցման եւ վերազինման աշխատանքը: Ըստ այդմ՝

ա) գնահատվել է լսարանային ֆոնդի առկա վիճակը, ընթացքի մեջ է դրա փուլային վերակառուցումը, արդիականացումն ու ընդլայնումը՝ կրթական ծրագրերին և համակազմի զարգացման խնդիրներին համապատասխան,

բ) «Կենտրոն» եւ «Մուրացան» կրթահամալիրների կլինիկաները (որոնցում է հիմնականում կազմակերպվում ուսուցումը բակալավրիատում և մագիստրատուրայում) վերակառուցվել և ապահովվել են բուժական ժամանակակից սարքավորումներով, որով միաժամանակ բարելավվել է ուսումնական դասընթացների դիդակտիկ նյութերի բազան,

գ) հիմնովին վերակառուցվել է «Մուրացան» կրթահամալիրի կլինիկական ախտորոշիչ լաբորատորիան, որն ապահովված է ախտորոշիչ եւ բուժական ժամանակակից սարքավորումներով և անհրաժեշտ ռեակտիվներով,

դ) որոշակի դրական տեղաշարժեր են կատարվել ուսումնական գործընթացի, գործավարության համակարգչայնացման, նոր տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ,

ե) ընթացքի մեջ են կլինիկաներում բուժական եւ ախտորոշիչ նորագույն սարքավորումների ներդրման, կլինիկական մասնագիտական ամբիոնները ուսումնական վարժասարքերով (ֆանտոմներ, սիմուլյատորներ), մուլյաժներով ապահովման գործընթացները,

զ) համալսարանի ուսումնագիտական լաբորատոր բազայի արդիականացման նպատակով մշակվել է հեռանկարային ծրագիր՝ ըստ կրթահամալիրների եւ կլինիկաների:

է) փուլային իրականացման մեջ է համալսարանի կրթահամալիրների մասնաշենքերի տեխնիկական փորձաքննության, հիմնավերանորոգման եւ վերակառուցման ծրագիրը:

**Չափորոշիչ բ. Ուսանողներին տրամադրում են ծրագրի սահմաններում ուսումնառությանը նպաստող մատչելի տեղեկատվություն և խորհրդատվություն:**

Հայաստանի անկախացումից հետո, երբ ուսուցանումը հանրապետության ԲՈՒՀ-երում տեղացի ուսանողների համար իրականացվում է միայն մայրենի լեզվով, կենսական անհրաժեշտություն էր դարձել հայերեն լեզվով մասնագիտական գրականության ստեղծումը: Մինչև 2005 թվականը ուսուցման ընթացքում կիրառելի էր հիմնականում ռուսերեն լեզվով գրականությունը: Այդ էր պատճառը, որ հաշվետու ժամանակահատվածում ստեղծվեց մայրենի լեզվով արդի գիտության պահանջներին համահունչ մասնագիտական գրականություն: Այսօր համալսարանը տեղացի ուսանողներին կարող է լիակատար տրամադրել մասնագիտական գրականություն հայերեն լեզվով: Սակայն պետք է նշել, որ դրանք հիմնականում ուսումնամեթոդական ձեռնարկներ և մեթոդական ցուցումներ են, իսկ անհրաժեշտ է ունենալ նաև մայրենի լեզվով դասագքերի անհրաժեշտ քանակ:

Ինչ վերաբերում է անգլերեն և ռուսերեն լեզվով դասավանդմանը, ապա այստեղ խնդիրը և՛ հեշտ է, և՛ դժվար: Առաջինը պայմանավորված դրանով, որ դասավանդման պրոցեսում կիրարվում է անգլերեն և ռուսերեն լեզուներով

աշխարհում հայտնի դասագրքեր: Օրինակ, կենսաքիմիան դասավանդելիս ուսանողներին խորհուրդ է տրվում պատրաստվել. անգլերենով՝ «Harper's, Illustrated Biochemistry», «A. Lehninger, Principles of Biochemistry», «Lippincott, Illustrated Biochemistry» և այլն, ռուսերենով՝ «Биохимия: Уч. под ред. Северина»:

Հարկ է նշել, որ մասնագիտական գրականությունն ընտրելիս ամբիոնները նաև հաշվի են առնում, թե որ երկրների ուսանողների հետ են աշխատում: Օրինակ, քանի որ անգլերեն լեզվով ուսումը տրամադրվում է հիմնականում Հնդկաստանից եկած ուսանողներին, ապա իրենց համար՝ որպես մասնագիտական գրականություն, օգտագործվում են նաև Հնդկաստանում տպագրված հեղինակավոր դասագրքերը: Օրինակ, նույն կենսաքիմիայի դասավանդման պրոցեսում օգտագործվում է Հնդկաստանում լայն կիրառելի «U. Satyanarayana, U.Chakrapani, Biochemistry» դասագիրքը:

Սակայն դրնով ամբիոնները բնավ չեն սահմանափակվում: 2000-ական թվականների սկզբից նրանց կողմից սկսվել են տպագրվել անգլերեն և ռուսերեն լեզվով ուսումնամեթոդական ձեռնարկներ և մեթոդական ցուցումներ, որոնց շտեմարանը տարեց տարի համալրվում և թարմացվում է: Հաշվետու ժամանակահատվածում տպագրվել է.

1. դասագիրք՝ 12 (հայերեն), 0 (անգլերեն), 0 (ռուսերեն),

2.ուսումնամեթոդական ձեռնարկ՝ 27 (հայերեն), 8 (անգլերեն), 8 (ռուսերեն),

Ինչպես արդեն նշվել է չափորոշիչ 2.3-ի բ. կետում, ուսումնառությանը նպաստող մատչելի տեղեկատվություն է տրամադրվում նաև նորագույն տեխնիկական միջոցների օգնությամբ. լայն կիրարկում են գտել (հիմնականում դասախոսությունների ընթացքում) էլեկտրոնային ppt-պրեզենտացիաները, անիմացիաները, տեսաժապավենների ցուցադրումը:

Այդ կոնտեքստում ուշադրության է արժանի նաև միջազգային մակարդակում կիրառվող Tempus ծրագրով իրականացված հեռավար և էլեկտրոնային ուսուցման վերապատրաստման դասընթացների մասնակիցների կողմից ԵՊԲՀ մի շարք ամբիոններում նշված մեթոդի մասնակի ներդնումը (տե՛ս, կայքերը www.community.livejournal.com/pathphys):

Ինչ վերաբերում է ծրագրի սահմաններում ուսումնառությանը նպաստող մատչելի խորհրդատվություն տրամադրելուն, ապա, ինչպես արդեն նշվել է,

ամբիոնները ամեն օր ունեն կոնսուլտացիոն ժամեր, որոնց ընթացքում մասնագետներն անվարձահատույց՝ երեք լեզուներով, տրամադրում են մասնագիտական խորհրդատվություն:

**Չափորոշիչ գ. ՄԿԾ-ն ապահովված է իր բովանդակությանը համապատասխան ուսումնամեթոդական անհրաժեշտ բազայով:**

ԵՊԲՀ ընդհանուր բժշկության ֆակուլտետի ՄԿԾ-ն ապահովելու նպատակով նշված ֆակուլտետին դասավանդող բոլոր ամբիոներում, որպես պարտադիր մասնագիտական գրականություն, կիրառվում են ՄԿԾ բովանդակությանը համահունչ մշակված դասագրքեր և ուսումնամեթոդական ձեռնարկներ, որոնք հաստատված են բուհի կենտրոնական մեթոդական հանձնաժողովի և գիտխորհրդի կ-ղմից: Վերջիններս անհրաժեշտ քանակությամբ առկա ղն գրադարանում կամ տրամադրվում են ամբիոնի կողմից:

ՄԿԾ բաղադրիչ գործնական հմտությունների ձեռք բերումը հիմնարար (բազային) առարկաների դասավանդման փուլում ապահովվում է լաբորատոր փորձի միջոցով, որն անցկացնելու նպատակով նշյալ առարկաներ դասավանդող ամբիոններն ունեն անհրաժեշտ փորձարարական բազայի նվազագույն հագեցվածությամբ լաբորատորիաներ: Որոշ ամբիոններում այս գործընթացում հետաքրքրված ուսանողներն ընդգրկվում են ամբիոնային ուսանողական գիտական խմբակներում:

Ուսումնամեթոդական բազայի անհրաժեշտ բաղադրիչներից է գործնական պարապմունքների ընթացքում օգտագործվող նյութական միջոցները՝ համակարգիչներ, փորձարարական մոդելավորում (համակարգչային, կենդանիների վրա), պատրաստուկների, լաբորատոր անալիզի տվյալներ, սլայդներ, նկարներ և այլն: Սակայն գործնական պարապմունքների ընթացքում, կիրառվոց միջոցները իրենց որակով և քանակով դեռևս բավական արդիական չեն: Ասվածը հատկապես վերաբերում է տեսական ամբիոններին:

Գործնական հմտությունների ձեռք բերումը մասնագիտական կլինիկական առարկաների դասավանդման փուլում իրականացվում է նրանց անմիջական ընդգրկմամբ համապատասխան մանիպուլյացիաներում (վիրակապություններ, վիրահատություններ, հիվանդների զննում, տվյալների վերլուծություն և այլն): Այս գործընթացի արդյունավետության բարձրացմանն անմիջականորեն նպաստում է այն հանգամանքը, որ համալսարանական կլինիկաների նյութատեխնիկական բազայի

հարստացումը բուհի առաջնային կարևորության խնդիրներից և հաշվետու ժամանակաշրջանում բուհի զարգացման թիրախային ուղղություններից մեկն էր: Նշենք որ կրթական ծրագրի վերը նկարագրված վերջին բաղադրիչի հզորացմանն էր ուղղված նաև մանիպուլյացիոն մուլյաժային կենտրոնի ստեղծումը:

ՄԿԾ-ն անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով ապահովելու նպատակով յուրաքանչյուր տարվա վերջում ամբիոնները, ուսումնասիրելով իրենց կարիքները, հայտ են ներկայացնում համալսարանի համապատասխան ադմինիստրատիվ օղակներին :

ՄԿԾ պարտադիր բաղադրիչ է նաև ուսումնաարտադրական պրակտիկան, որի շրջանակներում համալսարանը, պայմանագրեր կնքելով հանրապետության բոլոր մարզերն ընդգրկող զարգացած բուժհաստատությունների հետ, հնարավորություն է ստեղծում ուսանողների համար վերոնշյալ պրակտիկայի շրջանակներում պահանջվող հմտությունները ձեռք բերել առավել հագեցած բազա ունեցող կլինիկաներում:

Վերջին տարիներին համալսարանի միջազգային համագործակցությունների խորացմանն ուղղված ռազմավարական քայլերը հնարավորություն են ստեղծում ուսանողների համար նախատեսված կրթական ծրագրի որոշակի փուլ իրականացնել զարգացած նյութատեխնիկական հնարավորություններ ունեցող արտասահմանյան տարբեր բուհերում:

**Լավագույն փորձի օրինակներ**

1. Կլինիկական կրթահամալիրների ստեղծում:
2. Համակարգչային բազայի ընդլայնում:
3. Գրադարանային համալիրի արդիականացում:
4. Ուսումնական եւ գիտակլինիկական լաբորատորիաների աստիճանական վերազինում:

## Ոչ այնքան լավ փորձի օրինակներ

1. Տեսական ամբիոնների կրթական միջավայրը արդիականացման խնդիրը չի լուծված (կամ մասնակիորեն է լուծված)
2. Լսարանների ուսումնա-տեխնիկական միջոցներով ցածր ապահովվածություն
3. Ռեսուրս-կենտրոնների բացակայություն
4. Անհրաժեշտ հետեւողականությամբ չի իրագործվում ուսումնական ծրագրերի բեռնաթափման, նրանց բովանդակության աշխատաշուկայի կարիքներին եւ պահանջվող մասնագիտական կարողությունների համապատասխանեցնելու գործընթացը (մոնիտորինգի, մետա-անալիզի անբավարար մակարդակ)
5. Ուսումնական գործընթացի մեթոդական բարելավման անհրաժեշտություն
6. Բարելավման կարիք ունեն ուսումնական գործընթացի կազմակերպման մակարդակը, օժանդակ ծառայությունների որակը, համալսարանի ներքին մի միջավայրում տիրող բարոյահոգեբանական մթնոլորտը:

# Չ Ա Փ Ա Ն Ի Շ 7

## Ենթակառուցվածքը և ռեսուրսները

## Որակի ապահովումը

**ՄԿԾ-ի շրջանակում առկա է որակի ներքին համակարգ, որն ապահովում է ՄԿԾ-ի որակի կայունությունն ու շարունակական զարգացումը:**

**Հավակնությունները:** *Համալսարանում գործող որակի ներքին համակարգը հավակնում է ներքին և արտաքին շահակիցների կարիքների մշտադիտարկման միջոցով ապահովել կրթական ծրագրի շարունակական զարգացումը և ֆակուլտետներում որակի մշակույթի ձևավորումը:*

**Չափորոշիչ ա. Որակի ապահովման ներքին համակարգը մշակված է և գործում է հասարակության կարիքներին և ուսանողների պահանջներին հետևելու, ինչպես նաև իր գործունեությունը գնահատելու համար:**

Ընդհանուր բժշկության ֆակուլտետում («Բուժական գործ» մասնագիտությամբ, «Բժիշկ» որակավորմամբ կրթական ծրագիր) կրթության որակի գնահատման և ապահովման հանձնաժողովը գործում է սկսած 2011թ-ից, որի հիմնական գործառույթները բխում են համալսարանի որակի գնահատման և ապահովման կենտրոնի քաղաքականությունից և ռազմավարությունից: Համաձայն դրա որակի գնահատման և ապահովման ֆակուլտետային խորհրդի գործառույթներն են.

- վերահսկել և մասնակցել կրթական ծրագրի պլանավորման, մշակման, փոփոխման և դրանց որակի ապահովման գործընթացների իրականացմանը,
- վերահսկել և մասնակցել կրթական ծրագրերի մեթոդական, տեխնիկական և մարդկային ռեսուրսներով պատշաճ ապահովվածության գնահատմանը,

- ստանձնել տվյալ կրթական ծրագրի ուսման որակի ապահովման և ներքին վերահսկմանն ուղղված որոշումների հետևողական իրագործման հսկողության պատասխանատվությունը,
- երաշխավորել շահառուների բավարարվածությունը և նրանց մասնակցությունը կառավարման տարբեր էտապներում,
- խթանել ֆակուլտետներում որակի ապահովման մշակույթի զարգացումը
- տարեկան հաշվետվություն ներկայացնել համալսարանի կրթության որակի գնահատման և ապահովման կենտրոնին,

Որակի գնահատման և ապահովման ֆակուլտետային հանձնաժողովի գործառույթների իրականացման համար մշակվել է քաղաքականություն, համաձայն որի հանձնաժողովը պետք է ապահովի՝

-կրթական ծրագրի մանիթորինգը, նրա պարբերաբար վերանայումն ու ապահովումը,

- կրթական ծրագրի ինքնագնահատումը,
- ֆակուլտետային որակի ապահովման գործընթացների թափանցիկությունը,
- ներքին գնահատման գործընթացում ուսանողների, շրջանավարտների և գործատուների մասնակցությունը,
- ուսման որակի շարունակական բարձրացմանն ուղղված մեխանիզմների մշակումը,

-հետադարձ կապի միջոցով ինքնագնահատման գործընթացի իրականացումը:

2013թ-ին ֆակուլտետային որակի հանձնաժողովը պլանավորել է անցկացնել կրթական ծրագրի մոնիթորինգ՝ ցիկլային մեթոդական հանձնաժողովների հետ համագործակցելով: Մշակվել է հարցաշար, որի միջոցով ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շահակիցների շրջանում անցկացրած հարցումների միջոցով վեր է հանվելու կրթական ծրագրի բարելավմանն ուղղված հարցերի այն շրջանակը, որը կբարձրացվի շահակիցների կողմից: Այդ հարցերը կքննարկվեն ֆակուլտետային որակի հանձնաժողովի և ցիկլային մեթոդական հանձնաժողովների կողմից: Առաջարկությունները կդրվեն համընդհանուր քննարկման, որից հետո կմշակվեն կրթական ծրագրի բարելավման մեխանիզմները:

**Չափորոշիչ բ. ՄԿԾ-ի շրջանակում առկա են որակի ներքին ապահովման արդյունավետ քաղաքականություն և ընթացակարգեր**

Մինչև 2006թ. ԵՊԲՀ–ն չի ունեցել իր ստորաբաժանումների գործունեության որակը գնահատող կառույց: Սակայն 2005թ, երբ ՀՀ-ն ստորագրեց Բոլոնյան համաձայնագիրը և ընդունվեց ՀՀ բարձրագույն կրթության մասին օրենքը, անհրաժեշտություն առաջացավ ՀՀ բուհերում ներդնել եվրոպական կրթության որակի գնահատման համակարգ: ՈՒստի 2006թ-ին համալսարանում ստեղծվեց բարեփոխումների և ինտեգրացիայի բաժինը, որը ղեկավարում էր այդ աշխատանքները համակարգող պրոռեկտորը (տե՛ս ռեկտորի հրամանը):

Բաժնի հիմնական նպատակն էր ուսումնասիրել Եվրոպական և ամերիկյան բժշկական դպրոցների փորձը և մշակել առաջարկություններ՝ կրթական պրոցեսում Բոլոնյան համակարգի պահանջներից բխող փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

Բաժինը զբաղվում էր նաև կրթության որակի խնդիրներով, որը, սակայն կանոնակարգված բնույթ չէր կրում: Համագործակցելով ֆակուլտետային ցիկլային մեթոդական հանձնաժողովների հետ, բաժնի կողմից վերանայվել են առարկայական ծրագրերը, կատարվել է դրանց հորիզոնական և ուղղահայաց ինտեգրացիա, մշակվել և ներդրվել է թեստային համակարգը, մշակվել է ուսանողների գիտելիքների գնահատման կարգը և այլն: Սակայն բարեփոխում-ների և ինտեգրացիայի բաժնի քաղաքականությունը և ռազմավարությունը բավարար հիմքեր չէին ապահովում որակի գնահատման և ապահովման գործընթացներ իրականացնելու համար: Որակի ապահովման աշխատանքները կազմակերպելու համար բավարար չէին նաև մարդկային և նյութական ռեսուրսները:

Բաժնի աշխատակիցները մասնակցելով Տեմպուսի PICQA, DIUSAS, ինչպես նաև համաշխարհային բանկի «Կրթության որակ և համապատասխանություն» ծրագրի «Բարձրագույն կրթության բարեփոխումներ» ենթածրագրերին, ուսումնասիրելով եվրոպական ճանաչված բուհերի որակի գնահատման համակարգերը, ինչպես նաև գնահատելով համալսարանի բարեփոխումների և ինտեգրացիայի բաժնի աշխատանքի արդյունավետությունը, համալսարանի ղեկավարությունը հիմնավորեցին Կրթության որակի գնահատման և ապահովման կենտրոնը ստեղծման անհրաժեշտությունը: 2011թ համալսարանում ստեղծվեց

որակի գնահատման և ապահովման բաժինը և ներդրվեց որակի գնահատման և ապահովման համակարգը (տե՛ս ռեկտորի հրամանը նոր կենտրոն և հանձնաժողով ստեղծելու վերաբերյալ):

Բաժնի ստեղծումից հետո մշակվեցին որակի գնահատման և ապահովման կենտրոնի քաղաքականությունը, ռազմավարությունը, համալսարանի տարբեր ոլորտների գործունեության որակը գնահատող կանոնակարգեր և ընթացակարգեր: Օրինակ՝ մշակվել են ուսանողների գիտելիքների գնահատման համակարգի գնահատման ընթացակարգը, կրթական ծրագրերի տարեկան մշտադիտարկման ընթացակարգը, ուսանողների կողմից պրոֆեսորադասախոսական կազմի դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ հարցման կանոնակարգը, ինքնագնահատման զեկույցի պատրաստման ընթացակարգը, դասախոսների որակավորման կարգը և այլն (տե՛ս [որակի բաժնի քաղաքա-կանությունը, ռազմավարությունը](), [ուսումնական ռեսուրսների և խորհրդատվական ծառայությունների որակի գնահատման գործիքակազմը]() ԳԱՑը): Մշակված և կազմված հարցաթերթերը քննարկվել են ֆակուլտետային հանձնաժողովներում, որից հետո կատարվել են հարցումներ, որոնց արդյունքները տեղադրվել են համալսարանի կայքի համապատասխան էջում (տե՛ս համալսարանի կայքի որակի բաժնի էջը): Մշակման գործընթացում է կրթության որակի գնահատման և ապահովման մեթոդական ձեռնարկը (տե՛ս ձեռնարկի մշակումները):

2011թ-ի վերջին համալսարանի բոլոր, այդ թվում նաև ընդհանուր բժշկության, ֆակուլտետներում ստեղծվեցին որակի գնահատման և ապահովման ֆակուլտետային հանձնաժողովներ (տե՛ս որակի գնահատման և ապահովման ֆակուլտետային հանձնաժողովների կազմը):

Մշակվեցին որակի գնահատման և ապահովման ֆակուլտետային հանձնաժողովների քաղաքականությունը և դրանից բխող գործառույթները և մեկ տարվա (2011-2012թ. ուս. տ.) աշխատանքային պլանը (տե՛ս աշխատանքային պլանը), հանաձայն որի, հանձնաժողովը պետք է

1. մշակի կրթական ծրագրի մշակման, վերահսկման և վերանայման որակի գնահատման և ապահովման չափորոշիչներ և գործընթացներ,
2. անցկացնի կրթական (առարկայական) ծրագրի քննարկում և մոնիթորինգ,

3. մշակի ուսանողների ուսման վերջնարդյունքների հիման վրա հիմնված գնահատման որակի գնահատման և ապահովման չափորոշիչներ և գործընթացներ,
4. ապահովի շրջանավարտների և գործատուների հետ հետադարձ կապ:

**Չափորոշիչ գ. ՄԿԾ-ի շրջանակում հետադարձ կապի մեխանիզմներով հավաքագրվում է իրականացնող գործընթացների մասին հավաստի տեղեկատվություն, որը վերլուծվում է ծրագրի նպատակների և գործընթացների բարելավման համար:**

Համաձայն որակի գնահատման և ապահովման ֆակուլտետային հանձնաժողովի քաղաքականության, հանձնաժողովը պարտավոր է ներքին և արտաքին շահառուների շրջանում իրականացվող հետադարձ կապի միջոցով հավաքել տեղեկատվություն՝ տվյալ կրթական ծրագրի առանձին բաղադրիչների և ամբողջական գնահատման, ինչպես նաև դրա բարելավման նպատակով:

2011-12թթ-ին կրթական ծրագրի վերջնարդյունքների գնահատման նպատակով «Բուժական գործ» մասնագիտությամբ 284 կլինիկական օրդինատորների (շրջանավարտներ) շրջանում անցկացվել են հարցումներ: Հարցումների տվյալների մշակման արդյունքում արվել են եզրահանգումներ և առաջարկություններ ու տրվել են համալսարանի ղեկավարությանը (հարցման արդյունքները տպագրվել են համալսարանի «Բժշկություն, գիտություն և կրթություն» գիտա-տեղեկատվական հանդեսում (տես հանդեսի թիվ 14 համարը):

Մշակվել և մշակվում են կրթական ծրագրի տարբեր բաղադրիչների գնահատման վերաբերյալ նոր հարցաթերթեր (տե՛ս մշակված հարցաթերթերը):

**Չափորոշիչ դ. ՄԿԾ-ի ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ներքին ապահովման գործընթացներում**

Համալսարանի բոլոր, այդ թվում նաև ընդհանուր բժշկության ֆակուլտետի որակի հանձնաժողովում ընդգրկված են միայն ներքին (դասախոսներ և ուսանողներ) շահակիցներ (տե՛ս հանձնաժողովի կազմը): Արտաքին շահակիցների մասնակցությունը սահմանա-փակվում է միայն նրաց շրջանում անցկացրած հարցումներին կամավոր մասնակցությամբ: Այսպես. 2010թ. բուժ հիմնարկներում

աշխատող 247 բժիշկների շրջանում անցկացվեց հարցում՝ իրենց մոտ վերջին 3 տարիների ընթացքում աշխատանքի ընդունված շրջանավարտների գիտելիքների վերաբերյալ (տե՛ս հարցաթերթը): Հարցման արդյունքներն ամփոփվեցին, ներկայացվեցին համալսարանի ղեկավարությունը և տպագրվեցին «Բժշկություն, գիտություն և կրթություն գիտատեղեկատվական հանդեսում» (տե՛ս հանդեսի թ. 14 համարը): Ներքին շահակիցները մասնակցելով նաև ամբիոնական, ֆակուլտետային և ցիկլային հանձնաժողովների նիստերին իրենց առաջարկություններով նպաստում են կրթության որակի բարելավմանն ուղղված որոշումների կայացմանը:

2013թ-ից ֆակուլտետի որակի հանձնաժողովի կողմից պլանավորվել է յուրաքանչյուր տարի հանրապետության կլինիկաներում բժիշկների, բաժանմունքների վարիչների և կլինիկական օրդինատորների շրջանում անցկացնել հարցումներ՝ գիտելիքների ելքային արդյունքերի գնահատման վերաբերյալ՝ դրանից բխող առաջարկությունների մշակման նպատակով:

**Չափորոշիչ ե. ՄԿԾ-ի շրջանակում իրականացվում է օրինակելի փորձի տարածում**

Համալսարանում ներքին որակի ապահովման մշակույթը նոր է ձևավորվում:
Ինչպես ասվեց, վերևում, ընդհամենը մեկ տարի է, ինչ գործում է որակի գնահատման և ապահովման համալսարանական կենտրոնը և ֆակուտետային համապատասխան հանձնաժողովները: Այս մակարդակներում նոր են մշակվում և ներդրվում կարգեր և ընթացակարգեր: Ամբիոնների և ստորաբաժանումների մակարդակով դեռևս չկան որակի գնահատման և ապահովման կառույցներ, իսկ ֆակուլտետային կառույցները չունեն բավարար փորձ, ուստի և չենք կարող խոսել փորձի փոխանակման կամ տարածման մասին:

**Լավագույն փորձի օրինակ**

1. Մշակված են որակի ապահովման ներքին համակարգի (ֆակուլտետային հանձնաժողովներ) ռազմավարությունը և գործառույթները:
2. Կրթական ծրագրի շրջանակներում հետադարձ կապի միջոցով հավաքագրվել է կրթական ծրագրի վերջնարդյունքների վերաբերյալ

տվյալներ՝ ներքին և արտաքին շահակիցների շրջանում անցկացրած հարցումների միջոցով:

**Ոչ այնքան լավ փորձի օրինակ**

1. Կրթական ծրագրի որակի ներքին ապահովման գործընթացում արտաքին շահակիցների ներգրավվածությունը բավարար չէ:
2. Դեռևս հնարավոր չէ խոսել կրթական ծրագրի օրինակելի փորձի տարածման մասին: